

11, 062

জ্ঞানসংগ্রহণ  
সম্পদের প্রয়োগ  
করিয়ে আনা হচ্ছে

9(47.925)

2-42



11 SEP 2011

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՆԵՐԻ, ՄԻԱՅԵՒԹ.

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ  
ИНСТИТУТ ИСТОРИИ И МАТЕРИАЛЬНОЙ КУЛЬТУРЫ

А. АРУТЮНЯН

КРЕСТЬЯНСКИЕ ДВИЖЕНИЯ  
В АРМЕНИИ В ПЕРВОЙ  
ЧЕТВЕРТИ XVII ВЕКА

ИЗДАНИЕ АРМФАН-а

ЕРЕВАН

1939

ԽՈՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ  
ՊԱՍՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԻՆՍԻՏՈՒՏ

9(47-925)

Հ - 42

Հ. ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

այ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVII ԴԱՐԻ  
ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

31 AUG 2007

ԱՐՄԵՆԻԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1939

10 JUN 2013

11,062

## Ա Ր Ա Զ Ա Բ Ա Ն

Ա.

Հայ ժողովրդի պատմության, ուսումնասիրությունը կազմում է մեր իզեւլոգիական պայքարի կարևոր մոմենտներից մեջը: Հայ բորժուական պատմագրությունը, հետամուռ լինելով իր դասակարգային շահերին, տարիներ շարունակ աշխատել է կեղծել մեր ժողովրդի պատմությունը: Այդ պատմագրությունն իր ուսումնասիրության նյութը գարձել է միմիայն քաղաքական անցքերը, մի կողմ թողնելով տնտեսական ուսուցիչական խնդիրները և այն պայքարը, զոր ժողովուրդը մղել է իր կեղծողների գնմի:

Հայ ժողովրդի պայքարն ընթացել է մի կողմից վորպես տեղական իշխողների և շահազործողների ղեմ ուղղված ներքին ուղիւալական շարժում, իսկ մյուս կողմից՝ վորպես ժողովրդական ապատամբություններ՝ ընդդեմ սոսար նվաճների: Հայ բուրժուական պատմագրությունը, կեղծելով պատմությունը, ժողովրդի այդ այլակացը շարժում, իսկ յերկրորդը՝ «նախարարական» ապատամբություն: Մարքսիստական պատմագրության առաջ խնդիր և դրվում մերկացնել բորժուական պատմագրության այդ կեղծերը և վեր համեմ հայ պայքարը, զոր իր պատառթյունը ձեռք բերելու համար հայ ժողովուրդը մղել է ներքին և արտաքին տիտղների ղեւ:

Մեր այս մենագրությունը մի փոք և այդ ուղղությամբ, զոր նպատակ ունի վեր հանելու և ցուց տալու այդ սոցիալական շարժումներից մեկը՝ ուշ դիմագրություն:

Բ.

Մեր այս մենագրության համար հիմք ենք ընդունել գլուխավագես հայ մատենագրության տված տեղեկությունները: Հայտնի յե, վոր XV—XVI դարերը չանեն իրենց պատմիչները, սակայն, դրան հակասակ, XVII դարը շատ հարուստ է իր պատմիչներով: Այս ուսումնասիրության ակղքնազբյուրները կազմել են Գրիգոր Դարօնազցու «Ժամանակագրութիւն», Առաքել Դաւթիծեցու «Պատմութիւն» և Զաքարիա սարկավագի «Պատմագրու-

Տ պ ա գ ր վ ո ւ մ ե

ԽՍՀՄ ԳԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻՅԱՅԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼԻ

ՆԱԽԱԳՎԱՅՐԱՆԻ ԹՅԱՆ ՎՈՐՈՇՄԱՄՐԻ

Նախ. Տեղակալ՝ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ



4845  
39

g

թիւն» աշխատությունները, վորոնք մանրամասն կերպով նկարուց դրամ են իրենց ժամանակաշրջանի քաղաքական անց ու դարձերը և միաժամանակ քիչ թէ շատ արժեքավոր տեղեկություններ են հազորում տնտեսական ու գառակարգային փոխարարերությունների մասին:

Բացի վերոհիշյալ սկզբնաղբյուրներից, վորոց չափով՝ պատափութել ենք նաև Յերևանի ու Վաղարշապատի ձեռագրատներում յեղած XVI դարի յերկրորդ կեսի և XVII դարի առաջին կերպով ձեռագրերի հիշատակարանները։ Ստորև տալիս ենք այն մի ձեռագրերի հիշատակարանները և գրականության ցանկը, վոր պատափութել ենք մենք:

### Ա. Սկզբանադրյուրներ

1. Գրիգոր Դարանաղյի «Ժամանակագրութիւն», Յերևան, 1915 թ.։
2. Առաքել Դաւթիմեցի «Պատմութիւն», Վաղարշապատ, 1884 թ.։
3. Զաքարիա Մարգարյան «Պատմադրութիւն», Վաղարշապատ, 1870 թ.։
4. Թովմա Մեծոնիցի «Պատմութիւն Լանքթամուրայ և յանդրաց լորց», Փարիզ, 1860 թ.։
5. Միմենի Երեւանցի «Զամբռ», Վաղարշապատ, 1870 թ.։
6. Կարապետ Կոստանդնաց—«Վիճական տարեգիր», Ա. Պետերբուրգ, 1913 թ.։

### Բ. Գրականուրյուն

1. Ֆ. Ենգելս—«Անտի-Դյուրինգ», Յերևան, 1932 թ.։
2. Ֆ. Ենգելս—«Գերմանական գյուղացիական պատերազմը», Յերևան, 1934 թ.։
3. Ֆ. Ենգելս—«Սոցիալիզմի զարգացումը ուսուցիչների գիտություն», Յերևան, 1933 թ.։
4. Մարգարիտ Միքանեան—«Ազգապատմում», Բ. հատ., Կ. Պոլիս, 1913 թ.։
5. Մանկա Բարխուդարեան—«Աղուանից պատմութիւն», հատ. Բ., Թիֆիս, 1907 թ.։
6. R. M. Sykes, „A History of Persia“, vol. II, London, 1915.
7. Է զ օ վ, Գ. Ա. „Сношения Петра Великого с армянским народом“, С.-Петербург, 1898 թ.
8. Պրոֆ. Հ. Մանենյան—«Ֆեոդալիզմը հին Հայաստանում», Յերևան, 1934 թ.։
9. Կոռ—«Խոչայտկան կապիտալ», Յերևան, 1934 թ.։

## КРЕСТЬЯНСКИЕ ДВИЖЕНИЯ В АРМЕНИИ В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ XVII ВЕКА

(Р е з ю м е)

Научно-марксистское изучение истории армянского народа является вопросом весьма важным и актуальным. Армянская буржуазная историография изучала только политические события прошлого, оставив в стороне вопросы экономические и социальные и ту борьбу, которую вел армянский народ против своих поработителей.

Борьба армянского народа проявлялась, с одной стороны, как внутреннее социальное движение, направленное против внутренних эксплоататоров, а с другой стороны, как народное освободительное восстание против иностранных завоевателей.

Армянская буржуазная историография искажала историю армянского народа. Она характеризовала народные движения против внутренних эксплоататоров как „еретические“ (религиозные) движения, а борьбу против иноземных завоевателей—как „нахарарские“ движения.

Перед нашими историками стоит задача разоблачить фальсификацию буржуазных историков и дать правильную оценку борьбы, которую вел армянский народ за свое освобождение от внутренней и внешней эксплуатации.

Наша монография, исследующая одно из таких социальных движений в позднем средневековье (в первой четверти XVII века) под руководством Саркавага (дьякона) Мехли, является первым опытом в этом отношении.

Монография делится на 3 главы.

В первой главе подробно освещаются политические события, происходящие в XV—XVII веках: походы темураев Кара-коюнлуров и Ак-коюнлуров, бои туркменских племен и

ирано-турецкие войны, в результате которых Армения была разорена экономически и ослаблена политически.

Во второй главе разбираются социально-экономические отношения в Армении во второй половине XVI и в первой четверти XVII века. В этой главе исследуется вопрос о том, как, начиная с XIII в. и по XVII век, постепенно разлагаются и вовсе уничтожаются армянские светские феодалы. Их место занимают пришедшие со стороны другие социальные элементы, как то: ханы, паши, беки, агалары и др. Параллельно с этим выясняется, как церкви и духовенству, несмотря на тяжелое политическое положение страны, удается сохранить не только свое хозяйство и земли, но даже увеличить их за счет светских князей и крестьянства.

В начале XVII века духовенство являлось наиболее сильным крылом класса эксплоататоров-феодалов, доведших эксплуатацию крестьянства до крайних пределов. Поэтому крестьянские движения этого периода направлены в первую очередь против церкви и духовенства.

В третьей главе, составляющей половину труда, описываются крестьянские движения первой четверти XVII века и анализируются их причины, ход событий, движущие силы и последствия.

Крестьянские движения начинаются в Гандзасаре (Карабахе) при католикосе Ованесе VIII. Предводитель движения дьякон Мехлү проповедывал равенство между всеми людьми и призывал к борьбе против черного духовенства, захватившего богатства страны.

Это движение вскоре выходит за пределы Карабаха и распространяется в сторону Ереванского ханства, где господствовал хан Амиргун. В пути число последователей Мехлү все увеличивается и достигает наибольших размеров в деревне Канакер. Под Канакером участники движения встречаются с ханскими слугами-фарашами. Последние разбивают крестьян, а руководитель их Мехлү бежит вначале в Ниг (Апанский уезд), а оттуда в Турцию, Эрзерум и Иерусалим. Этим заканчивается крестьянское движение в Армении в первой четверти XVII века, возглавляемое Мехлү.

При исполнении этой монографии мы пользовались, главным образом, армянскими источниками из Вагаршапатской рукописной библиотеки.

Нами использованы также следующие труды:

### Первоисточники

1. Григор Даранахци—„Хронология“, Иерусалим, 1915 г.
2. Аракел Даврижеци—„История“, Вагаршапат, 1884 г.
3. Закария Саркават—„Историография“, Вагаршапат, 1870 г.
4. Товма Мецопеци—„История Ленктемура и его преемников“, Париж, 1860 г.
5. Симеон Ереванци—„Джамбр“ (Архив), Вагаршапат, 1870 г.
6. Карапет Костанянц—„Вимакан Тарегир“ (Летопись на камнях), С.-Петербург, 1913 г.

### Литература

1. Ф. Эниельс—„Анти-Дюринг“ (армянский перевод) Ереван, 1932 год.
2. Ф. Эниельс—„Крестьянская война в Германии“ (армян. перевод), Ереван, 1934 г.
3. Ф. Эниельс—„Развитие социализма от утопии к науке“ (армян. пер.), Ереван, 1933 г.
4. Маакия Орманян—„Азгапатум“ (История армян.) т. II, Константинополь, 1913 г.
5. Макар Бархударян—„История агван“, т. II, Тифлис, 1907 г.
6. Р. М. Sykes—„A History of Persia“, vol II, London, 1915
7. Г. А. Эзов—„Сношения Петра Великого с армянским народом“, С.-Петербург, 1898 год.
8. Проф. А. Манандян—„Феодализм в древней Армении“, Ереван, 1934 год.
9. Лео—„Торговый капитал“, Ереван, 1934 г.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՄԻՍՅՈՒՄ  
ՅԵՎ, ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVI ԴԱՐԻ ՎԵՐՅՈՒՄ ՅԵՎ,  
XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՋՈՐԴՈՒՄ

«XIV դարի վեցերին Հայաստանը վերջնականապես բաժանվեց Միջին Ասիայի և Եվրոպի միջև։ Հայ պայտագ տարիեր պետք բյութերի միջև։ Հայ ժաղավորի պատմության մեջ սկսվեցին ամենամուշը ժամանակերը։

(«ՊՐԱՎՈՒԹՅՈՒՆ»)

XIV դարի յերկրորդ կեսում քայլայվող մոնղոլական մեծ պետությունը դարձերջին վերակազմվում է Թեմուրլանի նոր նվաճումներով և իր դիրքով ու տարածությամբ բռնում է ավելի մեծ ծավալ քան նույնիսկ մոնղոլական ելլանությունը։ Թեմուրլանի նվաճումներն ավարտվում են XIV դարի վերջերին, վարով թեմուրիաների նոր կազմավորվող պետության սահմանները տարածվում են մինչև Արևելյան Յեվրոպա և Սիրիաի հարավային մասերից մինչև Հնդկական օվկիանոսը<sup>1</sup>։ Թեմուրլանի բանակների կազմից տրոք

<sup>1</sup> P. M. Sykes, „A History of Persia“, vol. II, page 196—197, London, 1915.

վում ու վաշնչանում եյին իրանի, Արաբիայի, Փոքր  
Ասիայի և Ռուսաստանի բերքառատ ղաշտերն ու հո-  
վիտները: Քայքայվում ու ամայանում եյին այդ յեր-  
կըրների տնտեսությունն ու կուլտուրան: Թեմուրլա-  
նի արշավանքների հետևանքով քայքայվում ու ամա-  
յանում եր նաև Հայաստանի տնտեսական ու քաղա-  
քական կյանքը, յերկրի ընակչությունը մահվան սար-  
սափից թագնվում եր Զանգեզուրի, Ղարաբաղի, Լոռու,  
Սասունի, Զեյթունի լեռնային վայրերում: Այս դրու-  
թյունը գնալով ավելի յե խորանում հետագա՝ XV—  
XVI դարերում՝ Կարա-Կոյունլու և Ակ-Կոյունլու<sup>1</sup>  
թուրքմէն ցեղերի ու իրանա-թյուրքական պատերազմ-  
ների ու կոփսերի ժամանակ:

Թեմուրլանի հիմնած լայնածավալ պետությունն  
սկսում է նրա մահից (1405) հետո քայքայվել և Ա-  
ռաջավոր Ասիայում առաջանում են ֆեոդալական բազ-  
մաթիվ մանր իշխանություններ, վորոնք, իրենց տե-  
քիտորիաները լայնացնելու նպատակով, շարունակ  
արյունահեղ պատերազմներ եյին մզում իրար դեմ,  
վլոր շատ անգամ կործանիչ հետևանքներ եյին ունե-  
նում կողմերից մեկն ու մեկի համար:

XV դարի ֆեոդալական այդ բազմաթիվ իշխա-  
նություններից Առաջավոր Ասիայում աչքի ընկնող  
դեր են խաղում յերկու թուրքմէն ցեղեր՝ Կարա-Կո-  
յունլու և Ակ-Կոյունլու, վորոնցից առաջինը տիրում  
եր Հյուսիսային Պարսկաստանին և Հայաստանի Հյու-  
սիսարեւլյան մասին՝ Թավրիզ մայրաքաղաքով, իսկ

<sup>1</sup> «Մե ու սպիտակ վաշնաբավոր»—այս անունը նրանք ստո-  
ցել եյին՝ իրենց դրոշակի վրա ու սպիտակ փոշխարների խոր-  
հըգանիշ ունենալու պատճառով: (P. M. Sykes, „A History of  
Persia“, vol. II, page 244—249).

Յերկրորդը հաստատվել եր Հյուսիսային Միջագետ-  
քում և Հայաստանի հարավային մասերում՝ Դիարբե-  
քիր կենտրոնով: Այս յերկու ցեղերը Հայաստանին-  
տիրելու համար ավելի քան 60 տարի պատերազմներ-  
մղեցին իրար դեմ, պատերազմներ, վորոնք չափազանց  
բացառաբար եյին ավելում Հայաստանի տնտեսական  
դրության վրա, վորովիճեակ կոփսերի ընթացքում յեր-  
կու կողմերն ել առաջատակում, կոտրում, կրզպտում,  
թալանում և ավերում եյին գյուղերն ու քաղաքները:

XVI դարի սկզբից Հայաստանն ու Միջագետքը  
պատերազմի թատերաբեմ են զառնում նույն դարի  
սկզբին Իրանի բարձրավանդակում նոր ձևավորվող  
Սևֆեյան դինաստիայի և XIV դարում Փոքր Ասիա-  
յում ձևավորված Ռասմանյան իմպերիայի միջն, վո-  
րոնցից յուրաքանչյուրը ձգտում եր իր հափշտակում-  
ների, կեղեքումների ու շահագործման յենթակա յեր-  
կարների սահմաններն ընդարձակել ի հաշիվ մյուսի:

Իրանա-թյուրքական պատերազմներն սկիզբ են-  
տնում 1514 թվականին, ապա ընդմիջումներով շա-  
րունակվում են 1533—35, 1547—55, 1578—90 և  
1602—27 թ., մինչև վերջնականապես 1639 թվա-  
կանին յերկու պետությունների միջն կնքվում է մի-  
դաշնագիր, վորը տեսում է մինչև 1723 թվականը:

Պարսից ծահ-թանձմասպը, 53 տարի թագավորե-  
լուց հետո, 1576 թվին մեռնում է. նրա մահով Իրա-  
նում ծագում են զահակալական ներքին արյունահեղ  
կոփսեր, վորոնք տակնուվա յեն անում յերկրի  
քաղաքական կացությունը, մինչև վոր վերջնականա-  
պես գահը մնում է Աբբասին (1587—1629). Վերջինիս  
որով Սևֆեյան դինաստիան հասնում է իր զարգաց-  
ման գաղաթնակետին:

Իրանում գահի շուրջն առաջացած այս ներքին խովություններից ոգավելով՝ Հայաստանը, Անդրկովկասը և Ատրպատականը նվաճելու համար, Ռոտմանյան իմակերիան պատերազմ և հայտարարում իրանին: Թյուրքական բանակը զորավար Մուստաֆա-Լալայի գլխավորությամբ 1578 թվականին շարժվում է գեղի Քրանի սահմանները և Զըլդը լճի մոտ հունիսի 23-ին ու Քանաքի գետեղերքին սեպտեմբերի 8-ին տեղի ունեցած ճակատամարտերում հաղթում է իրանցիններին, վրով Անդրկովկասն անցնում է ոսմանցինների ձեռքը: Ոսմանցինները նվաճում են նաև Յերևանն ու Վաղարշապատը, վարոնք մեծ կոտորածի ու ափարի յեն յենթարկվում: «...Լալայ փաշայն... աւերեաց զերեան և գերեաց կի [60,000] անձինս...»<sup>1</sup>:

Իրանա-Թյուրքական կոփառերը շարունակվում են փոփխակի հաջողություններով՝ բայց ընդհանուր առամբ հաղթանակի գրավականը թյուրքական բանակի կողմն եր: Իրանցինները մի քանի աննշան հաղթանակներից հետո վերջինիքը պարտվում են թյուրքերից, վերջիններին թողնելով ամբողջ Անդրկովկասը, Ատրպատականը՝ իր Թավքի մայրաքարով, Իրանի արևմտյան նահանգները՝ Իրաք-Աջամին և Լորիստանը:

Սեփեյան դինաստիայի գրությունը գնալով ծանրանում եր վճչ միայն թյուրքերի հաղթանակներով, այլև յուղբեկների հաճախակի արշավանքներով, վուրոնք տեղի եյին ունենում Իրանի արևելյան կողմից: Այս ժանր կացությունից գուրս գալու համար Սեփեյան դինաստիայի նոր գահակալ Շահ-Արքասը (1578

<sup>1</sup> Զաբարիա Սարկաւագ—«Պատմագրութիւն», Ա. հատ., եջ 13, Հայարշապատ, 1870 թ.:

1629)<sup>1</sup> ստիպված է լինում հաշտություն առաջարկել թյուրքերին, իր պատվիրակությունն ուղարկելով Կ. Պոլիս՝ Մուրադ Գ-ի (1575—1594) մոտ: Դաշնագիրը կնքվում է 1590 թվի մարտի 21-ին. ըստ այդ գաշնագրի՝ Թյուրքիային եյին մնում՝ Ատրպատականը, Շեհրիզորը, Շիրվանը, Կասպից ծովի նավահանգիստներն ու Լորիստանը<sup>2</sup>, Յերևանը, Վրաստանը և Կովկասյան գագառները, վորով ել վերջանում է իրանա-թյուրքական պատերազմների յերկրորդ լրջանը: Այս գաշնագիրը տևում է բավական յերկար, մինչև վոր Շահ-Արքասը կարողանում է դասավորել իր ուժերը:

Շահ-Արքասն այդ խաղաղ տարիներում իր ուշացրությունը գարձնում է յուղբեկների արշավանքների առաջն առնելու, կենարունացած բանակ կազմակերպելու, կիսանկախ գարձած ֆեռդալներին ճնշելու և կենտրոնացած մի ուժեղ պետություն ստեղծելու հարցերի վրա: Այդ պատճառով նա յերկրում մտցնում է մի շարք ուժորներ, վորոնց շնորհիվ յերկրի տընտեսական ու քաղաքական դրությունը բարելավվում է:

Շահ-Արքասը նաև զբաղվում է յերկրի արևելյան սահմանների ամրացման գործով: Նա պատերազմ է հայտարարում յուղբեկներին և հաղթում է (1597) Նրանց, վորով յերկիրն ապահովում է թիկունքից, իսկ սահմանն ամրացնելու համար հաղարավոր քրդեր Քուրդաստանից տեղահանելով՝ վոխագրում է Խորասանից հյուսիսից: Այսպիսով, Շահ-Արքասը յերկրի արևելյան սահմաններն ապահովում է թուրքմեննական ցեղերի հաճախակի արշավանքներից:

<sup>1</sup> P. M. Sykes, „A History of Persia“, vol. II, page 256 7.

<sup>2</sup> Նույն տեղ, եջ 258.

<sup>3</sup> Նույն տեղ, եջ 258.

**ՅԵՐԿՐՈՐԴ՝** կենտրոնական իշխանության դիրքելու ամբազնդելու համար Շահ-Արքասը վոչնչացնում և չեղողացնում է կենտրոնախույս ուժերին—կիսանկար գարձած ֆեռղաներին,—նրանց ձևքից խլելով տընտեսական ունեցվածքը—քաղաքական ու ժառանգական իրավունքները: Ապստամբ խաներին ֆիզիկապես վոչնչացնում է, իսկ գժգոհներին ել ներքին դադարացնացման և յենթարկում, նրանց կտրելով իրենց շրջապատից, այսինքն՝ խաներին փոխադրում եմ դավասից մյուսը, փորպեսի վերջնականապես ապստամբ ցեղապետների համառությունը կոորդինատ-Արքասը միաժամանակ հրավեր և ուղարկում բոլոր ցեղապետ-քեոդաներին, վոր գան և միանան «Շահսավան» (շահ սիրող) կազմակերպությանը: Այդ հրավերի հիման վրա հազարավոր խաներ լքում են իրենց ցեղապետներին և միանում այս նոր «ցեղին», վորը մինչև այսոր ել բնակվում է Թավրիզի և Արդարի միջև, դեպի Ղազվին ընկած տարածության վրա: Այս «Շահսավան» կազմակերպությունն եր, վոր Շահ-Արքասին մատակարարում եր, զանազան պաշտոնյաներ ու գործիչներ:

**ՅԵՐՐՈՐԴ՝** մինչև Շահ-Արքասի գահակալությունը իրանի բանակը կազմված եր մոտ 60 հազար կըզբաշ ձիավորներից, վորոնք յենթարկում եյին միմիայն իրենց ցեղապետներին, բանակը կըում եր ֆեռղալական բնույթ, առանց այդ ցեղապետների համաձայնությանը պետությունը բանակին հրաման պալ չեր կարսող: Այս անհարմար կացությունից զուրս գալու համար Շահ-Արքասն այդ բանակը բաժանում է մասերի և ցրում, իսկ նրանից կազմում է պետական նոր բանակ՝ բաղ-

կացած տաս հազար հեծյալ և տասներկու հազար հետևակ զինվորներից: Այս բանակը մնայուն եր, ուներ իր հրամանատարական կազմը և պահվում եր պետական ծախսով: Բացի սրանցից, ուգավիշտով անգիտացի Շերլի յեղայրների ներկայությունից, վորոնք այդ ժամանակ գտնվում եյին իրանում և վորոնցից մեկը թնդանոթ ձուլող եր, Շահ-Արքասը նրանց միջոցով իրանական բանակում կազմակերպում է նաև իր թնդանոթաձիր գունդը: Իրանական այս նոր կազմակերպված բանակն իսկապես կարող եր կովել Առամանյան իմպերիայի գեմ:

**Կ 5** **Կ 6** **Չ 30** Զորրորդ՝ Շահ-Արքասը լայն արտոնություն շնորհեց տեղական առևտրականներին, մաքսային պատնշներով, բոլոր ոտարերկրացիներին, բացի անդիական վաճառականներից, արգելեց մտնել իրան<sup>1</sup>, մասնավանդ պրտուգալացիներին: Մետաքսի առևտուրը գարձեց պետական մենաշնորհ և այդ մետաքսը մեծ մասամբ արտահանում եր չին Չուզայի և Արարատյան դաշտի առևտրականների միջոցով: Յելվուպայի հետ կապ պահպանելու համար անգիտացիների ոժանդակությամբ Շահ-Արքասը պորտուգալացիներից խլում է: Պարսից ծոցում գտնվող Հուրմուդի կղզին, վորը հնարավորություն և տալիս ծովի վրայով առևտուր անել Յելվուպայի հետ: Շահ-Արքասը շատ լավ եր գիտակցում, վոր առանց առևտրական կապիտալի ֆինանսական միջոցների վարձու բանակ պահել չի կարելի, զրա համար ել նա քանդում եր յերկրի ներար գոյություն ունեցող բոլոր պատճենները, լայն հնարավորություններ և ստեղծում առևտրական կապիտա-

<sup>1</sup> P. M. Sykes, „A History of Persia“, vol. II, page 258—262.

լի գործունելության համար և այդպիսով ապահովում է իր պետական բյուջեն:

Շահ-Արքասի այս ներքին ռեֆորմների հետեւանքով Սեփեյան դինաստիան հասնում է իր հզորության բարձրացույն կետին: Այդ ռեֆորմներից հետո յեւ, վոր Մեֆեյան դինաստիան իրեն ուժեղ և զգում չափվելու Ոտոմանյան խմբերիայի հետ և յետ խլելու նրանից այն յերկամասերը, վորոնք նրան ելին անցել 1590 թվի մարտի 21-ի գաշնազըով:

Իրանա-ոսմանյան պատերազմների յերրորդ շրջանն սկսվում է 1602 թվականին և տևում է ավելի քան 25 տարի<sup>1</sup>: Պատերազմի առիթը ծառայում է այն, վոր Թավրիզի թյուրքական պահակազորը նոր արշավանքներ ու կեղեքություններ եր սկսել Թավրիզի և Սալմաստի գավառներում: Շահ-Արքասը, վերը հիշված առիթը պատրիակ բոնելով, չեղյալ և հայտարարում 1590 թվականի մարտի 21-ին կ. Պոլսում կնքված դաշնագիրը, պատերազմ և հայտարարում Ոտոմանյան խմբերիային, մեծ բանակով հարձակվում է Թավրիզի վրա, 1603 թվականին գրավում և այն, վորը 18 տարի գտնվում եր Թյուրքիայի գերիշտանության ներքո: Պարտության մատնվող թյուրքական բանակի բեկորները հավաքվում են Նախիջևան՝ Շահ-Արքասին դիմադրելու համար, սակայն վերջնիս բանակը համառ կուիթների միջոցով քշում և նրանց գետի Արարատյան գաշտը և պաշարում և Յերևանի բերդը, բայց չի կարողանում գրավել այն, իսկ իրանական բանակի մյուս մասը, վոր Ամբրոգուս խանի գլխավորությամբ, Հայաստանի հյուսիսարևելյան մասերը նվաճելով հասել

Ար Գանձակ, Շահ-Արքասի հրամանով այստեղից ուղեավորում է գետի Յերևան, բերդը պաշարող բանակին ոգնելու համար:

Շահ-Արքասի բանակներն ուժ ամսվա պաշարումից հետո գրավում են Յերևանի բերդը, իսկ մինչեւ բերդի գրավումը, այդ բանակների վորոշ խմբեր գրավում ու թալանում են Թյուրքիային պատկանող մի շարք գավառներ, հատկապես Վանի, Կարսի և Երզրումի նահանգները: Այդ ասպատակությունները, վոր կատարվում եյին իրանցիների կողմից, շատ ծանր են նըստում յերկրի բնակչության վրա: Իրանցիների այդ սուաջնազորումը կասեցնելու համար Ոտոմանյան իմպերիան Սինան-փաշայի գլխավորությամբ մի բանակ և ուղարկում, վորը շուտով հետ և մղում իրանցիներին Վանի, Երզրումի և Կարսի նահանգներից: Թյուրքական զորաբանակի առաջնազորումը կանգնեցնելու ուղատակով Շահ-Արքասը 1604 թվականի աշնանն առաջազրում է գրավված գավառների բնակչության տեղահանման մի ծրագիր, վորը կորսուաբեր և լինում Արարատյան գաշտի բնակչության համար: Այդ տեղահանման մանրամասնությունները նկարագրված են Առաքել Խավրիժեցու «Պատմութիւն» գրքի Գ., Դ. և Ե. գլուխներում: Այդ տեղահանման դրդապատճառներն ելին, առաջն՝ գատարկել թյուրքական բանակին անցնող շրջանները, քանդել ու այրել քաղաքներն ու գյուղները, թյուրքական բանակը ձմեռվա սառնամանիքներին թողնելով առանց ոթեանի և ուղելիքի յերկրորդ՝ տեղահանված բնակչությունը, մանափանդ առարականներն ու արհեստավորները վորոշ չափով կարող եյին շենացնել իրանը և վերջինիս նոր մայրաքաղաք Սպահանը: Այս մասին նույնիսկ խոսու-

<sup>1</sup> P. M. Sykes, „A History of Persia“, fol. II, page 262—264.

վանում և ինքը՝ Շահ-Աբբասը—յերբ նրանցին պահանջեա աղնվականները մեղաղում են «հայասիրության» մեջ, նա պատասխանում է նրանց.

«...դուք ընդ սուզ ինչ սնոտի սէրն իմ, զոր առնեմ ընդ նոսա (հայերի հանգեղ, Հ. Հ.), մի վշտանայք և մեղաղբէք ինձ, զի ես բազում ծախիւք, ջանիւք և հնարիւք հաղիւ թէ կարացի բերել զնոսա յայս յաշարհ. ոչ թէ վասն օգտի նոցա այլ վասն օգտի մեր՝ զի աշխարհս մեր ժինեցի՝ և ազգն մեր յաւելցի»<sup>1</sup>:

Մեր նպատակից դուրս ե մանրամասնորեն կանդ տոնել պատերազմների և աեղանանման արհավիրքների վրա, վորոնց այնքան ընդարձակ եջեր և նվիրել ժամանակակից պատմագիր Առաքել Դավիթեցին, այլ միայն բավականանում ենք մի մեջերումով վերը հիշված պատմագրից՝ զրությունը պարզելու համար.

«Եւ ի շարժմանէ այսց երկուց տիեզերակարցուց<sup>2</sup> որք զարթուցեալք են ի պատերազմ եթէ Սարգարն՝ որ եկն յարկմտից, և թէ շահն՝ որ ի կողմու արեելցից՝ թէ որքան աւերումն և քանդումն եղի աշխարհի, թէ ի գալն և թէ ի գառնալն, թէ որքան ծանրաբեռն հարկավաս հանջութիւն եղեալ ի վերայ ժողովրդեանն և բոնութեամբ ասին, նոյնակն և զուրուսաթն՝ որ զինի զօրացն բերել տային, թէ զօրքն՝ որ ի ձմեն երիվարուն իւրեանց զշախ տային, կամ զքանդումն տանց և այգեստանաց, և զիսիումն արտորէց՝ և զհանումն համբարաց՝ ցորենոյ և զայլ սերմանեաց, և աւարումն, և յափշտակումն»

<sup>1</sup> Առավել Դաւթիթեցի—«Պատմութիւն», գլ. 6, էջ 48, Վարշավապատ, 1884 թ.:

<sup>2</sup> Խոսքը վերաբերում է թյուրքական զորավար Աբնան-վաշային և Շահ-Աբբասին:

Ընչից և ստացուածոց, զուստերաց և զդստերաց, և սպանումն անպարտ անձանց, զորս ի յայտնի և զորս ի գաղտնի, և զայլ ամենայն չարիսն զոր ածին ի վերայ աշխարհի. մեզ ոչ զոյ կար թուելոյ, այլ այնմ, որ թուէ զրագմութիւն աստեղաց, և ստեղծ զայնքան անձին՝ որք ժամանեցան անողորմ և մարդագէմ գազանացն այնոցիկ»<sup>1</sup>:

Կամ թե մի այլ տեղում նույն պատմագիրը գըտում է.

«Եւ ի մէջ երկուց տիեզերակալացս այսոցիկ... ամայի մնաց երկիրն Արարատու իւրովք մասնաւոր գաւառոքն...»<sup>2</sup>:

Այսպիսով, 1603—1605 թ. թ. իրանաւթյուրքաշան պատերազմները և Շահ-Աբբասի աեղանանումները միծ հարված են հասցնում Հայաստանի տնտեսական կյանքին, առանձնապես Արարատյան աշխարհում: Սակայն իրանաւթյուրքական կոփակները զրանով չեն վերջանում, և իրանի ու Թյուրքիայի բանակները նորից ասպատակում են Հայաստանի քանդված նահանգներն ու գավառները, մինչի վոր 1627 թվականին վերջնաշականապես հաղթանակ և տանում Շահ-Աբբասը: Վերջինիս մահից հետո պատերազմները կրկնվում են մի քանի անգամ և հաշտության վերջնական պայմանագիրն Քրանի ու Թյուրքիայի միջև կնքվում և 1639 թվականին, վորով Հայաստանը բաժանվում և այդ յերկրուների միջև: Հայաստանի հյուսիսարևելյան մասն առնցնում և իրանին, իսկ հարավարևմտյանը՝ Թյուրքիային:

Այս պատերազմները, վոր XVI դարում և XVII

<sup>1</sup> Առավել Դաւթիթեցի, «Պատմութիւն», գլ. 9, էջ 57—58:

<sup>2</sup> Նույն տեղ, գլ. է, էջ 58:

դարի առաջին քառորդում տեղի ելին ունենում չայ-  
սատանում, թեմաւրիաններից և Կարակոյունլուններից  
ու Ակ-Կոյունլուններից հասո, շատ քիչ ըրջանների բա-  
ցառությամբ, վերջնականապես քայքայում են յերկրի  
անտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքը  
քաղաքներն անկման են հասնում, հայ աշխարհիկ խո-  
շը ֆեոդալները, բացի Սյունյաց լեռնային աշխար-  
հում կուշ յեկած մի քանի մելիքներից, գրեթե չքա-  
նում են յերկրից: Սակայն յերկրի տնտեսական կյան-  
քի անկման այդ գարաշը չափանում ել վանքերն ու յե-  
կեղեցիները կարողանում են պահպանել իրենց կալ-  
վածներն ու գոյությունը:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԸ XVI ԴԱՐԻ ՅԵՐԿՐՈՐԴ ԿԵՍՈՒՄ ՅԵՎ, XVII ԴԱՐԻ  
ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՌԴՈՒՄ

Քննության առնելով XVI դարի վերջերին և  
XVII դարի առաջին քառորդում Մերձավոր Արևել-  
քում տեղի ունեցած քաղաքական անցքերը, մեզ մնան  
է միայն վերլուծել Հայաստանում այդ նույն ժամա-  
նակաշրջանում տիրող սոցիալ-տնտեսական հարաբե-  
րությունները, վորով ել ավելի կրյուրանա մեր առաջ-  
դրված խնդրի՝ Մեխլույի գյուղացիական շարժման  
պատճառները պարզելու գործը: Հայաստանի հայ աշ-  
խարհիկ խոշոր ֆեոդալները, XIII դարից սկսած, շնոր-  
հիկ մոնղոլ տիրողների վարած հարկային խիստ քա-  
ղաքականության և XIII-XVII դարերի քաղաքական  
աննպաստ պայմանների, աստիճանաբար թուլանում և

կորցնում են իրենց կալվածների գդալի մասը, իսկ  
մյուս մասը վրկելու համար, «հոգու վրկության» պա-  
տրիվակի տակ, նրանք նվիրում են իրենց տիրապե-  
տության սահմաններում գտնվող վանքերին ու յեկե-  
ղեցիներին և դրա գիմաց վորպես «վարձ» ստանում  
են պատարագներ:

Հայ յեկեղեցին մոնղոլների կողմից վայելում եր  
լայն արտօնություն՝ նա ազատված եր հարկերից, իսկ  
այդ հանդամանքը վեղարավոր կալվածատերներին հնա-  
րավորություն եր տալիս իրենց ձեռքում կենտրոնաց-  
նելու աշխարհիկ խոշոր կալվածատերերի հողերի վո-  
րոշ մասը, և հետագայում՝ XV-XVII դարերի քաղա-  
քական անկայուն գրության ժամանակ ևս վանքերն  
ու յեկեղեցիները դարձյալ կարողանում եյին պահպա-  
նել իրենց կալվածներն ու ունեցվածքը: Այդ մասին  
ուշագրավ տեղեկություններ են պարունակում վիմա-  
կան արձանագրությունները.

«ԶԺԱ. [1262]...ես Թափիս, գուստը Շարապ-  
շահին, ետու զիմ գանձագին հայրէնիքն զնորսն  
ի մեր ուժտա, ի Բգնայրս, ի սուրբ Աստուածածինս.  
և հայր Աբրահամ եւ այլ միաբանեալ սուրբ եղ-  
բայրքս փոխարէն հատուցին յամենայն ամի ժ.  
աւր պատարագ, ը. աւրն ինձ առնեն, Թափիկանս,  
եւ ը. աւրն Գրիգորոս. արդ որք կատարեն...  
հաստատ է Սենսցն անդաստանաւքն, հոգիվ եւ  
ջրովս...»<sup>1</sup>

«...ես Սիթի խաթուն, ամուսին Աղպուղա-  
յին, ետու ի սուրբ Մարիանէ ի միաբանայտունն  
գՓարպոյ հոգին կէսն որ Այծամանց երկիրն որ  
զկենակկու Ապաղարի Փիր որդին...գնեալ երկու

1 Կ. Կոտուանեանց—«Վկմական տարեգիր», հջ 105, Ս. Պե-  
տերքուրդ, 1913:

ի թուրաննէ ի Խոմավէ...Մարիանէիս տվել, որ  
զա էլիխնէս տվի ու յմ ազատեցի...ոչ շարիատ,  
ոչ էլ մեծ կամ փոքր խարճող...ի թվ. չնը [1323]:  
Ես Յակոբ Ապուրի Փիր որդի աւել տվի հետ իմ  
գնած Փարպոյ հողին զիմ գնած խուսանն, որ  
Աւշականայ հանդին...»<sup>1</sup>:

«...ես Սայառնս, որդի պարոն Աղբաստոյ,  
տուի իմ հայրենեացն զՏանձաշորի սուրբ ուխտո  
Գանձասարայ առաջնորդութեամբ տէր Եղիա-  
յին...թուիս ջեղ» [1467]<sup>2</sup>:

Այսպիսի բազմաթիվ վկայություններ կարելի յե-  
րեւել և ցույց տալ վոր ի հաշիվ աշխարհիկ ֆեոդալ-  
ների՝ հոգեոր ֆեոդալների ձևոքում են կենարոնանում  
ընդարձակ կալվածներ:

Այս յերեւոյթը գնալով ավելի յե խորանում հե-  
տագա՝ XV—XVII դարերում, և հոգեոր ֆեոդալները  
անտեսական մեծ կարողություն են ձեռք բերում քա-  
ղաքական տեսակետից աննպաստ այդ դարերում:

XVI դարի վերջերին և XVII դարի առաջին քա-  
ռորդում հոգեոր ֆեոդալների տնտեսական կարողու-  
թյունը համառ և այն աստիճանին, վոր սևագլուխ ա-  
բեղաները զուրս են գալիս վանքերի խուցերից և  
սկսում են վարել կալվածատիրական անտեսություն,  
ձեռք բերելով վոչ միայն հողային տարածություններ,  
այլև տափարի նախիլներ և վոչխարի հոտեր: Սևագլ-  
ուխ աբեղաներն իրենց անտեսություններում աշխա-  
տեցնում եյին մեծ թվով ծառաներ և աղախիններ:  
Նրանք միաժամանակ ողազործում եյին ճորտերի  
ձրի պարտադիր աշխատանքը—կոռը:

1 Կ. Կոստոնեաց—«Վիժական տարեգիր», եջ 161:

2 Նույն տեղ, եջ 173:

Հոգեոր ֆեոդալների զարգացման և նրանց կող-  
մից ինքնուրույն կալվածատիրական տնտեսություն  
վարելու մասին հարուստ տեղեկություններ են հա-  
յորդում ժամանակակից պատմիչները: Այդ մասին ու-  
շագրավ տեղեկություն և տալիս XVII դարի առաջին  
կեսի պատմագիր Գրիգոր Դարանաղցին՝ իր «Ժամա-  
նակագրութիւն» աշխատության մեջ վորը լույս է  
տեսել 1915 թ. Յերուսաղեմում: Գրիգոր Դարանաղցին  
1600—1603 թ. թ. յեղել և Սաղմոսավանքում (Աշտա-  
րակի շրջան) և միաժամանակ շրջել և Հայաստանի  
բոլոր վայրերը: Ահա ականատես պատմիչի վկայու-  
թյունները կալվածատեր աբեղաների մասին.

«Եւ վանորեից աբեղայքն, որ ամէնքն աս-  
հասարակ սուտ եպիսկոպոսք էին եղեալ վասն  
միմեանց նախանձու եւ ոչ վասն այլ երեք՝ ի  
սուտ անուն կաթողիկոսացն, եւ թողեալ էին  
զլուսազարդ վանոնքայսն, սփուեալ էին ի գեղու-  
րայսն եւ անդեայք և այդեք և բուրաստանք եւ  
հօտք խաշանց եւ արջասոց բազմութիւնս ստա-  
ցեալ էին եւ եղեալ էին իբրև զմի ի մեծատանց  
աշխարհականացն եւ կալեալ էին ի կանանց  
տանտիկնայս ի վարձու եւ զանուանքն հացթուի  
էին եղեալ, զոր եւ եւ տրուազ ամենեցուն՝ մի-  
այն անուամբ Գրիգոր Դարանաղցի, որ թվին  
Ռինթ (1600) գնացի յայնմ աշխարհին և բնա-  
կութիւն արարի ի Սաղմոսավանից անապատին  
գերիս ամս, և զայս ամենայն անկարգութիւնս,  
զոր գրեցի ի վերոյ, եւ ինձէն ականատես իսկ  
եղէ: Եւ ցաւէր սիրտ իմ ի վերայ անօրէն զոր-  
ծոց նոցա եւ ոչ զայտարէի հանապազ անաչառ  
յանդիմանելոյ զնոսա, եւ վասն ձիթակերութեան-  
քըն, որ ամենայն ոք անխտիր ուտէին ի պա-  
տւուրսն եւ պղծէին զամնայն կերակուրսն, որ

բազում վիշտ կրեցի վասն այնորիկ յամենեցունցըն թույլ և թերի կատղիկոսացն, մանաւանդ ի Մելքն ևոչ Սեղեկէն»<sup>1</sup>:

Այս ընդարձակ միջբերումն ամենից առաջ վկայում է այն, վոր XVI դարի յերկրորդ կեսից սկսած զարգանում, ուժեղանում են վանքավատկան և առանձին վանականների կալվածները. յեկեղեցիները, վանքերը և կուսակրոն հոգևորականությունն սկսում են խոշոր կալվածատերեր դառնալ, վորովհետեւ հոգիորականները, վանքերն ու յեկեղեցիները պատերազմների ժամանակ համեմատաբար գերծ եյին մնում կողոպւտներից ու թալաններից, իսկ շատ հաճախ ել նոր արտօնություններ եյին ձեռք բերում իրանական և թյուրքական պետությունների կողմից: Այդ շրջանի յուրաքանչյուր յեկեղեցի կամ վանք իր կալվածային հարստությամբ մրցում եր նախկին խոշոր կալվածատերերի հետ և ձեռք եր բերում մեծ քանակությամբ հարստություն, վորը մեծ մասամբ կուտակվել եր պատերազմի ժամանակ պահ արված գանձերից ու ապարանքներից: Բացի այդ, առևտրականների նկատմամբ Սեփեյան իրանի վարած քաղաքականության հետեւ վանքով XVI դարից Հայաստանում նույնպես սկսում է զարգանալ առևտուրը, առաջ են գալիս առևտրական կենտրոններ, որինակ՝ Հին Ջուղան, Կարբին, Յերեվանը և այլն, վորոնք կապվում են Անդրկովկասի, Կասպիական ծովեղերքների, Թրիլիսի, Շամախի, Դերբենդի, Հյուսիսային իրանի և Փոքրասիսիական ու Միջերկրական յերկրների և քաղաքների հետ:

<sup>1</sup> Գրիգոր Դարմանացի—«Ժամանակակրություն», մասն Բ. էջ 296.

Զնայած XVI դարը և XVII դարի առաջին քառորդում կազմում եյին իրանա-թյուրքական պատերազմների մի ժամանակաշրջան, պատերազմներ, վորոնց թատերաբեմը հիմնականում հանդիսանում եր Հայաստանը և վորոնք սարսափելի աղետ եյին յերկրի բնակիչների համար, բայց և այնպես իրանա-թյուրքական տիրապետությունը, համեմատած նախորդ շրջանի թեմուրիտների, նրանց հաջորդների, թուրքաների անընդհատ կրկնվող արշավանքների ու տեղահանումների հետ, վորոնք հրարխային գրության եյին հասցըել յերկիրը, վորոշ առումով համեմատաբար առավել կամ պակաս չափով խաղաղություն եր քերում և նպաստավոր պայմաններ եր ստեղծում յերկրի տնտեսական կյանքի, հատկապես առևտրական կապիտալի զարգացման համար: Յեվ ահա, առևտրական կապիտալը, վորին Լեռն խօշայական խավիտալ անունն և տալիս, այս գարաշրջանում նորից սկսում և աշքը ընկնող դեր խաղալ Հայաստանում, հատկապես Արաքսի միջին հովտում, Հին Ջուղայում և նրա շրջակայում:

Ապա՝ հետզհետեւ զարգացող կապիտալի ազգեցության տակ գետի աշխարհիկ կյանքը ձգտող վանական արեղանները թողնում են «բուսավոր» վանքերը՝ գուրս են գալիս սիջնաղարյան ճգնավորական կյանքից և «տակնուվըրա յեն անում կրոնական հարաբերությունները»: Սեազգութ արեղանները, դուրս գալով վանական խուցերից, տարածվում են գյուղերում, ձեռք են բերում են ինքնուրույն առտեսություն, ձեռք են բերում ընդարձակ այգիներ, բուրաստաններ, մեծ քանակությամբ վոշխարի հոտեր, արջառների նախիրներ:

Ա հարստություն են դիզում: «Ժամանակազրության» հեղինակի ասելով, այդ վանական «սուտ յիպիսկուպաներին» ընդառաջում և հովանափրում եր Մելիք-սեթ կաթողիկոսը՝ չպայքարելով նրանց գեմ, վորի մասին հեղինակն այնքան դառնությամբ ե խոսում:

Քրիզոր Դարանազու այս վկայությունը հաստատում է Առաքել Դավրիժեցին, վորը նույնպես XVII դարի աղատմիչ է և գեղքերին զրեթե ժամանակակից ու ականատես.

«Վասն զի ամենայն վանօրայք ազդիս չայոց՝ իւրաքանչիւր սեազլուխ ունէր իւր զինչս առանձին, այդի և բուրաստան, փէթակ և տուն, և մարան, և համբարանոցս, և զմուտս ստացուածոց. նաև զմուտս հասարակաց վանիցն մասունու արարեալ՝ յինքեանս բաժանէին: Եւ զայն ամենայն ինքեանց, և ազգայնոց՝ եւ իւրեանց հաճելեաց արանց ծախէին ի պէտս կարեաց...»:

«Եւ բնաւ ոչ զիտէին թէ պարտ է կարգաւորի վեղար և փիլոն ունիլ զիւրեաւ, կամ հանգերձն խոշորս, եւ ասուխս զգենուլ. այլ որպէս աշխարհական, և զմարմնաւոր իշխանս փափուկ և ազնիւ զգեստիւ պճնէին. չաշխուր, եւ կապայ, եւ պատուական փակել ի գլուխս, եւ քալափուշ զիւրեւ առեալ: Այլ եւ ոչ վարկանէին թէ պարտ է վանականաց պահօք և ծումաջանիւր երկօք կենցաղավարիւ, այլ ի բոլոր տարին ուտիք և զինի և միս անխտիր...»:

«Եւ ոչ միայն գեղական երիցունք և արեշայք ըստ ասացելում անուզզայ կարգօք լեալ թափառականք, այլ եւ կաթուղիկոսքն՝ զի ոչ թէ մի էր, այլ երեք և չորք կաթուղիկոսք, վասն զի յաղագս փառամոլութեան, եւ աղանութեան իրրե զմաքսաւորս զարալայիւ եւ հարկիւ ի Պարսից թագաւորէն առնուին զիշխանութիւն կա-

թուղիկոսութեան՝ և զսուրբ Աթոռն Եջմիածին-եւ ի շրջագայութեան իւրեանց ի մէջ ժողովրդեանն, թագաւորական ծառայ եւ այլազգի զօրականս շրջեցուցանէին ընդ ինքեանս, եւ զիրաւունու եւ դհասս՝ որք ի ժողովրդենէն՝ ծշիւ եւ բննութեամբ ուժգին առնուին որպէս զորդիւն Հեղեայ-եւ կաթուղիկոսքն՝ որպէս ինքեանք արծաթով և կաշառօք ընկալեալք զատարման կաթուղիկոսութեան, ոյնպէս եւ ինքեանց ձեռնազրեալ եպիսկոպոսն եւ քահանային, ագէտք, խոտանք-և անպիտանք, ըստ սազմուին, որք էին լիալ պաշտօնեայք որովայնի՝ հանսապաղ ի զիներուս զինքերեալք՝ զուսանոք իրր զմարմնաւոր իշխանու յառաւուէ մինչև ցերեկոյ, հետեւալ կատակաց և լկտի բանից՝ և դատարկութեան»:

«...Նաև զպահո ձիթով և զինեաւ ապականէին, ոմանք կնահանանք, և ոմանք երկկանայք, և չհաս և մեզօք ազգաշաղախ պղծութեամբ»<sup>1</sup>:

Այս ընդարձակ մեջբերումը ցույց ե տալիս, վոր XVI դարի վերջին և XVII դարի սկզբներին հոգեութեանը ձգուում են վոտի տակ տալ «հինը» և հարմարվել աստիճանարար զարգացող առետրական կապիտալին:

Վանքերի նեղ ու մութ խուցերն ալես չեյին կարող բավարարել զարգացող կապիտալի նախնական կուտակման պահանջներին: Հողի մշակման մանր ու պրիմիտիվ գյուղացիական յեղանակը չեր կարող ավելացնել առեւրի առարկա կազմող հավելյալ արդյունքը՝ այդ ամենից առաջ կարող եր տալ խոշոր կալվածատիրական տնտեսությունը, վորին ձգտում եյին հարմարվել հոգեութ ֆեոդալները:

<sup>1</sup> Առաջին Դարիմիցիւ—«Պատմոթիւն», գլ. ի7, էջ 220—222, Վաղարշապատ, 1884թ.:

Այսպիսով, հետզհետե զարգացող կապիտալի աղքեցության տակ սեագլուխ աբեղաները դուրս են դալիս միջնադարյան վանական խուցերից, իրենց ձեռքն են վերցնում յեկեղեցու կալվածները—հողերը և վարում են ինքնուրույն կալվածատիրական տընտեսություն, յեկեղեցիներն ու վանքերը թողնելով «անտեր և անտիրական»—«իբրև զանտէր և այրէ լրիեալ ի փեսայէն»:

Վանքերից գուրու յեկող աբեղաները, բացի յեկեղական հողերի հափշտակումից, հափշտակում են նաև գյուղացիների հողակտորները, նրանց ունեցվածքը և միաժամանակ ծանր հարկերի տակ են դուռմ նրանց: Այդ պատճառով հոգեորականության այդ թեմ, վորին գլխավորում եր Մելիքսեթ կաթողիկոսը, գյուղացիության կողմից պայքար և սկսվում Մեխլու սարկավագի գլխավորությամբ:

Այդ նույն ժամանակ Սյունյաց անսապտականների շարժումը, վոր կազմակերպվել եր հոգեոր գասի պահպանողական թեի կողմից, ուղղվում և մի կողմից՝ գյուղացիական շարժման, մյուս կողմից՝ աշխարհականցող աբեղաների դեմ: Անսպատականների շարժման զեկավարներ հանգիստանում եյին Դավիթն ու Մովսեսը: Նրանց շարժումն իր պայքարի հիմնական սլաքն ուղղվել եր Մեխլույի գլխավորած գյուղացիական շարժման դեմ, իսկ այս վերջին շարժումը կասեցնելու համար իր պայքարի յերկորդական սլաքն ուղղվել եր աշխարհականացող աբեղաների դեմ՝ գյուղերից, աղաքակներից և ավաններից նրանց նորից վանքերը վերաբերձնելու համար: Ան թե ինչ ե գրում «Ժամանակագրության» հեղինակը Սյունյաց անսպատականների զեկավար Մովսեսի մասին:

«Զայս ամենայն, զոր ասացի և զբեցի (խոսքը վերաբերում ե վերը բերված հատվածներին—Հ. Հ.), մին մին խափանել ջանայր (Մովսեսն), և հանել բոնութեամբ ի գեղորէիցն և յափշտակել տայր բոնաւորացն զարտ և զայդիս նոցա և զամենայն կալուածու և զառւնս նոցա յաւարի տայր առնել և զիւրեանքն բոնութեամբ բերէր ի կարգս խստակրօնս մուծանէր: Եւ շատք ումանք ի կաթողիկոս Մելքին (խոսքը Մելիքսեթի մասին ե—Հ. Հ.) ապաւինելով ոչ կամէին ելանել ի տեղոջէ իւրեանց և ի կալուածոցն հրաժարել: Տակաւին վարդապետ գոլով առնէր զայս»<sup>1</sup>:

Դարանաղցու «Ժամանակագրության» այս հատվածը պարզորշ ցույց ե տալիս, վոր Սյունյաց անսպատի վարդապետը խանքարում եր սևազլու աբեղաների աշխարհական գառնալու ձգտմանը: Նա նույնիսկ չի քաշվում նրանց ունեցվածքն ավարի ու թագանի յենթարկելուց, իսկ այդ սևազլուխներին պաշտպանում և Մելիքսեթ կաթողիկոսը: Այսպիսավ, հոգեվարտականը ներսում առաջացած հոստեների պայքարը դրսվորում եր, մի կողմից՝ հնի—միջնադարյան սմարտա բարենքը նույնարյամբ պահպանելու հարցը, իսկ մյաւ կողմից՝ տռաջ եր հուռում հնի վերտանյամ և զարգացած հասարակություններին հարաբերություններին հարմարվելու հարցը:

Դարանաղցու աշխատությունից մեջբերված հատվածը միաժամանակ հաստատում ե այն, վոր վանքերի խուցերում ապրող աբեղաներն իրոք դուրս են յեկել «Ուսավոր» վանքերից, իրենց ձեռքն են վերցրել մեկեղեցիների ու վանքերի ունեցվածքը և կալվածառիրական անտեսություն ու աշխարհիկ կյանք են

<sup>1</sup> Դարանաղցի—«Ժամանակագրութիւն», մասն Բ., էջ 296—297.

վարել: Այս «նոր կալվածատերերը» իրենց անտեսությունը մշակում են գյուղացիների ձրի պարտադիր աշխատանքով: Բացի այս շահագործումից, պարտքերի զիմաց նրանք հափշտակում, իրենց նողերին ելին միացնում գյուղացիների հողակառները և աստիճանաբար հողազրկում ելին գյուղացիությանը:

XVII դարի առաջին կեսում յեղած կալվածատերական հարաբերությունների զարգացման մասին վորոշ տեղեկություններ հաղորդում են նաև Զաքարիա արքավագը.

«Վասնորոյ յամենայն կողմանց գան յԵրեղան, և գնեն զար ինչ և կամին և զառնան ի տեղիս իւրեանց: Նոյնպէս եկին և ի Թուրիզայք բազմամ կարաւան և զնեցին բրնձ, բամբակ, իւղ, պամիր, երազու, ձեր, կաշի, մար, և այլ<sup>1</sup> գորինչ կամեցան՝ առին. և ի գիշերի գնային զնանապահն վասն հովոյն»<sup>2</sup>:

Զաքարիայի աշխատության այս հատվածը ցույց է տալիս, թե Արարատյան աշխարհում ինչն եր առևտրի առարկա կազմում: Արդյոք այդ նահանգի գյուղացիությունն ի վիճակի յեր իր պրիմիտիվ տեխնիկայով և աշխատանքի ցածր արագագործականությամբ այնքան հավելյալ պրոդուկտ արտադրել, վոր, բացի տեղական շուկայի կարիքներին բավարարելուց, առևտրի առարկա գառնար նաև արտաքին շուկայի համար: Այս հարցին պետք է բացասական պատասխան տալ, վորովհետև գյուղացիական մանր, ցաք ու ցրիկ անտեսություններն ի վիճակի չելին ստեղծելու այդ-

1 Ընդգծումը մերն ե. Հ. Հ.:

2 Զաքարիա—«Պատմագրութիւն», հատ. Բ., գլ. 1, Բ.:

քան հավելյալ արտադրանք: Այսուեղից յեղակացնում ենք, վոր թավրիզի կարավանների համար առևտրի առարկա հանդիսացող բամբակը, բրինձը, յուղը, պանիրը և այլն, բացի գյուղացիական անտեսությունից սատցած հավելյալ պրոդուկտից, արդյունք ելին նաև կալվածատիրական անտեսությունն մշակման, վորովհետև կալվածատիրական անտեսությունը հետապնդում եր այն նպատակը, վորովհետի արտադրանքի հիմնական մասը շուկա հանվի: Իսկ այդ ժամանակաշրջանում նման անտեսություն չայսատանում վարում ելին աշխարհականացող արեղանները: Սակայն մեղ անհավանական չի թվում, վոր կալվածատիրական անտեսություն կարող ելին վարած լինել նաև տիմարհել գեռդաները: Հայաստանի անտեսական ներքին կյանքի այս նոր յերեսութիւնը առաջացումը խորացնում է գյուղացիության շահագործումը և սրում է գասակարգային պայքարը: Բացի զրանից, գյուղացիության շահագործումը կատարվում եր նաև ծանր հարկերի և տուրքերի միջացով, վորոնք գանձվում ելին իրանական ու թյուրքական պետությունների և տեղական գեռդաների (խաների, բեղերի, փաշաների, մելլիքների ու քալանթարների) կողմից: Պետական հարկերն ամենաուժեղ չափով գանձվել են: XVII դարի վերջերին և XVIII դարի սկզբներին, յերբ Հայաստանն ու Անդրկովկասը, Ատրպատականի հետ միասին, 1590 թվականին Կ. Պոլում կնքված գաշնադրության համաձայն, անցել ելին թյուրքիային:

Թյուրքական պետությունը վերը նշված յերկրությունը ավելի ծանր հարկեր եր պահանջում, և այդ յերկրներից պահանջված հարկերն այնքան ծանր են

յեղեւ վոր իրանի սահմանագլխում ապրող խաներն ու մելիքները և նրանց յենթակա զյուղացիների վորոշ մասը՝ նեղվելով, թողել են իրենց յերկրները և զնացել իրան: Այդ մասին հետաքրքիր և արժեքավոր տեղեկություն և հաղորդում զարձյալ Առաքել Դավիթիժեցին՝ իր աշխատության մեջ:

«...ոմանք յաշխարհէս Ատրպատականի իշխանք և կողմնակալը մահմետականք և քրիստոնեայք, զնացեալ էին առ թագաւորն Պարսից, վասն զի յոյժ չարաչար նեղութեամբ նեղէին զնոսա ազգն Օսմանցոց ծանր հարկապահնջութեամբ, և կեղեքմամբ զրկէին և կողովաէին... ոչ միայն զազգս Հայոց, այլև զազգն Վրաց և զՄահմետականաց...»:

Այլև չորս գեղ ի Դիղակայ երկրէն միահազորն չուեցին և զնացին յերկիրն Պարսից...: Եւ է պատճառ Դիղակեցւոց և զաշտեցւոց զնալոյն ծանր հարկապահնջութիւնն, կեղեքելն և կողպատելն և կուռէճութիւնն առնելն, և անխնայ սպանանելն զքրիստոնեայն»<sup>1</sup>:

Ոտոմանյան իմագերիայի ծանր հարկապահնջությունը բացատրվում է յերկու պատճառով. առաջին՝ թյուրքական պետության մեջ ֆեոդալական հարաբերություններն ավելի սուր կերպով ելին զրսեփորգում: Թյուրքերը, կ. Պոլսի նվաճումից (1453) հետո, ժառանգում են բյուղանդական կայսրությունն ու նրա ֆեոդալական հարաբերությունները և շարունակում են պահպանել այդ հարաբերությունները: Թյուրքական պետությունը ֆեոդալական այլպիսի մի յերկիր ժառանգություն ստանալով, չնայած իր արեհյան բռնակալական բնույթին, այնուամենայնիվ իր

<sup>1</sup> Առաքել Պարիժեցի—«Պատմութիւն», գլ. Գ., եջ 8—10:

պլուա յե կրում բյուղանդական ֆեոդալիզմի կնիքը: Այս հանդամանքը նկատի ունենալով, ենգելուր գրում եւ Արևելքում առաջին անգամ տաճիկներն են մտցրել իրենց նվաճած յերկրներում մի տեսակ հողատիրական ֆեոդալիզմ<sup>2</sup>: Այստեղ խոսքը վերաբերում ե այն ֆեոդալիզմին, զորը յուրահատուկ եր Յելլոպաշյին: Մակայն չի կարելի բառացի այնպիս հասկանալ վոր իրը թե տաճիկներն ուղղակի փոխ են առել բյուղանդական ֆեոդալիզմը, առանց վերջինս իրենց ներքին պայմաններին հարմարեցնելու, իսկ այդ հանդամանքն ավելի խորացրել և թյուրքիայում աշխատավոր ժողովրդի ֆեոդալական շահագործումը: Յերկրորդ պատճառն այն է, վոր Անդրկովկասն ու պատճական Հայաստանն Ատրպատականի հետ միասին, 1590 թվականին՝ կ. Պոլսում կնքված գաշնալրության համաձայն, անցնում են թյուրքիային, բայց այդ յերկրները հետու լինելով կենտրոնից, ավելի շատ ելին յենթարկում թյուրքական պաշտոնյաների կամայականություններին ու կեղեքումներին:

XVII գարի սկզբին սաստկացող հարկապահնջությունը, կամայականությունը և կաշտակերությունը չեյին կարող իրենց ներթին չուժեղացնել յերկրի ներսում առաջացող դասակարգային պայքարը: Ճիշտ է, ըստ Զաքարիա սարկավագի հաղորդած տեղեկությունների, իրանցիների նվաճումներից հետո հարկերը թեթեանում են, բայց դրա վորիսարեն սաստկանում է կոռը:

«...Սա<sup>2</sup> ի տիրելն իւրում Երևանայ, իսկոյն

<sup>1</sup> Ենգել—«Անտի-Դյուրիինգ», եջ 229:

<sup>2</sup> Խոսքը վերաբերում է Ամիրգունա խանին. Հ. Հ.:

ձեան էարկ շինութեան և մարդաշատութեան»  
Նախ սկսաւ շինել զբերգն և ապա ապարանս, և  
զայգիս, և զբուրաստանս և զպարտէզս, և հանել  
զառուս, և առաւելուլ զջուրըն: Այլ և ի տեղիս  
տեղիս թեթևացոյց զնարկն, և երարձ զծանր լուծ  
ի պարանոցէ սամկաց: Բայց զի բազմացնց  
զՄայիսայն՝ այսինքն կոռն (ընդգծութիւրը մերն  
են—Հ. Հ.), քանզի որպէս ասացաք՝ թէ՝ շի-  
նուածս առներ, վասն այնորիկ բազմացնց զկոռն-  
վասնորոյ առասպեկցին, թէ՝ կին յլի գորով  
այր նորա տանէին կոռ, և ոչ թողուին գնալ ի  
տուն իւր. և կինն ծնանէր որդի և զարգանացր  
և առաքէին զնա՝ կոռն, զի հայրն երթիցէ լ-  
տուն»<sup>1</sup>:

Զաքարիայի աշխատության այս հատվածն ու-  
շագրավ և այն տեսակետից, վոր նախ՝ հաստատում և  
թյուրքիայի տիրապետության շրջանում յեղած ծանր  
հարկերի գոյությունը, հարկեր, վորոնք Ամիրզունա  
խանի ժամանակ (1604—1625) համեմատական չա-  
փով թեթևանում են: Յերկրորդ՝ չնայած վոր ոսմիկ-  
ների հարկերը համեմատարար թեթևանում են, բայց  
խստանում և կոռը, ձրի պարտազիր աշխատանքը, վո-  
րը մեծ մասամբ կիրասիւմ և շինարարական աշխա-  
տանքների վրա: Պատմիչի վկայությունը հարկերի  
թեթևացման մասին վերաբերում և միայն պետական  
հարկերին և վոչ թե տեղական աշխարհիկ ու հոգեու  
ֆեոդալներին, հատկապես Եջմիածնին վճարվող հար-  
կերին ու տուրքերին: Ամիրզունա խանի ժամանակա-  
շրջանին վերաբերող բավականաշափ տեղեկություն-  
ներ կան այն մասին, վոր Եջմիածնի վանըը մեծ քա-  
նակությամբ հարկեր եր գանձում ժողովրդից:

<sup>1</sup> Զաքարիա—«Պատմազրութիւն», Ա. հատ., գլ. իր., էջ 45:

Հոտ մատենազրական աղբյուրների՝ XVII դարի  
ակզբում Եջմիածնի վանքը 300 թուման պարտքի տակ  
է ըսկնում<sup>2</sup>. այս ինդիբը շատերը բացատրում են  
թյուրքական պետության կողմից Եջմիածնի վրա զըր-  
ված ծանր հարկերով բայց մենք կարծում ենք, վոր  
այդ պարտքերը կարող եյին առաջացած լինել այն  
կաշառքներից, վոր կաթողիկոսական աթոռը ձեռք  
բերելու համար յեպիսկոպոսները տալիս եյին թյուրք  
և իրանցի պաշտոնյաներին: Սա հաստատվում և նրա-  
նով, վոր Մելիքսեթ կաթողիկոսն իրանական արքու-  
նիքին խոստանում է վճարել տարեկան հարյուր թու-  
ման զբամ, յեթի Շահ-Աբբասը թույլ տա իրեն կաթո-  
ղիկոսական աթոռն ստանձնելու.

«Եթէ քաղցրացի ի վերայ մեր կամք թա-  
գաւորին՝ և արացէ մեզ այցելութիւն, և տացէ  
զիշխանութիւն կաթողիկոսութեան մեզ, մեք  
տամք ամ յամէ ի դիւան թագաւորին յիւրաքան-  
չիւր տարի հարիւր թուման սոճիկս ծառայից  
թագաւորին»<sup>2</sup>:

Շահ-Աբբասը հավանություն և տալիս Մելիքսեթի  
ստաջարիին և համաձայնում և, վոր նա ստանձնի  
կաթողիկոսությունը: Մելիքսեթ կաթողիկոսի այս ա-  
ռաջարկի մասին պատմիչները հակասական տեղեկու-  
թյուններ են տալիս: Նրանցից վոմանք Մելիքսեթի  
վարժունքը բացատրում են նրանով, թե նա հանձն և  
առել տալու յերեք հարյուր թումանի այն պարտքը,  
վոր Շահ-Աբբասը գրել եր նրա վրա, վորպես տուգանք  
Ֆրա հականավարական գործունեյության համար,  
ուսկի վոմանք եւ ընդհակառակը, գտնում են, վոր Մե-

<sup>1</sup> Առաքել Դաւրիթեցի—«Պատմութիւն», գլ. Գ., էջ 166:

<sup>2</sup> Նույն տեղ, գլ. մը, էջ 167:

Աքսեթ կաթողիկոսը հանձն եր տռել յուրաքանչյուր տարի հարյուր թուման հարկ վճարել իրանական արքունիքին, վորովհետև Շահ-Աբբասը կաթողիկոսական աթոռը նրան եր հանձնել։ Կարծում ենք՝ վերջինա տվելի հավանական է։

Սելիքսեթը, կաթողիկոսության պաշտոնն ստանձնելով, Սեփեյան արքունիքին պետք և վճարել խոստացած հարկը, սակայն սեպուի արեղաները շատ քիչ բան եյին թողել Եղմիածնում, վանքը «յոյժ սաստիւ աղքատացել էր», հետեւը արքունիքին խոստացած գումարը պետք և գանձվեր աշխատավորական մասնաներից։ Այդ մասին ահա թե ինչ և գրում Դավրիտեցին։

«Իսկ կաթուղիկոսն (խոսքը Սելիքսեթի մասին եւ Հ. Հ.) վասն թագաւորական մուզավային և վասն պիտոյից այս զուլեբոյս, ելանէր և արշէր յաղս Հայոց, և ուր և շրջէր կաթուղիկոսն զուլեբն ևս ընդ նմա շրջէին, և ծանրանային վերայ ժողովրեանն վասն պէս պէս կարեաց ինքեանց և երիվարաց իւրեանց, և սեղանք նոցա յամենայն աւուր ոչ էր առանց գինուոյ, և ծամաք նոցա ոչ թէ սակաւ, և ժամանակ գիներ բութեանն միշտ։

Եւ ի շրջագային իւրում կաթուղիկոսն յամենայն երկիր ի մէջ ժողվրդեանն, ուր և լինէր իրաւամբք հասոյթք իւր զայն առնոյք, և իրրեռ մինէր այն բաւական ծախուց իւրոց և զուլերոյն, և մուզավային, վասն որոյ զարս անպարապաս... եթէ երեց, եթէ աշխարհական, կալեազնոսս թարց իմիք պարտեաց և վասու, անիւրաւաբար յօդէր բարուրս ի վերայ նոցա և պահանջէր գրամ, և մատնէր ի ձեռս գինուորաց

1 Առաջին Դաւրիթեցի—«Պատմութիւն», գլ. մը., եջ 168:

զուլեբոյն, որք կախէին յոտիցն և բրածեծ առնէին, մինչև ըստ կամաց իւրեանց առնուեին զբամս և ապա արձակէին»<sup>1</sup>։

Հարկապահանջության հետ կապված այս կամայականությունները, վոր կատարվում ելին Մելիքսեթ կաթողիկոսի կողմից, պատերազմների հետևանքով աղքատության դուռը հասած գյուղացիական մասսաների գրությունն ավելի ելին ծանրացնում, և այդ հիման վրա խոր գծոնություն եր սկավում ընդում աշխարհիկ ու հոգեոր տիրողների, իսկ այդ գծոնությունները XVII դարի առաջին քառորդում, Ամիրգունա խանի ժամանակ, վեր են ածվում գյուղացիական մի շարժման, վորը հայտնի յեւ «Մելիքուցի շարժում» անունով։

#### ՅԵՐՐՈՒԹ ԳԼՈՒԽ

XVII ԳՈՐԾ Ա.Ա.Զ. ՔԱ.Ա.Պ.Մ.Ի. ԳՅՈՒՂ.Ա.Ց.Ա.Ա.Ա. ՇԱ.Բ.Մ.Ա.Ն. ՆԱ.Խ.Ա.Դ.Յ.Յ.Ա.Լ.Ն.Ե.Բ.Բ. ԾՐ.Գ.Գ.Բ.Բ. Ը.Ն.Թ.Ա.Ց.Ֆ.Բ. ԾԱ.Բ.Ժ.Բ. ՈՒ.Ժ.Ե.Բ.Բ. ՅԵ.Վ. ՀԵ.Տ.Ե.Վ.Ա.Ն.Բ.Ն.Ե.Բ.Բ.

#### I

XVI դարի վերջին և XVII դարի սկզբին Հայաստանում տիրող անտեսական դրությունը և արտաքին քաղաքական անցքերը քննության յինթարկելիս՝ արքայագային անցքերը քննության յինթարկելիս՝ արքայագային անցքերը յիրկիր աշխատավորական մասսաների նյութական ծանր դրությունը։ Այդ յերկու յթք ինչպես գիտեաք, առաջ եր յեկել մի կողմից՝ արտաքին պատերազմների, մյուս կողմից՝ ներքին ու արտաքին իշխողների դանձած ծանր հարկերի ու տուր-

1 Առաջին Դաւրիթեցի—«Պատմութիւն», գլ. մը., եջ 169—170:

քերի հետևանքով: XVII դարի առաջին քառորդում  
մասսաների համար ստեղծված այդ ծանր վիճակը  
նրանց մզում եր դեպի ասլուստմբություն: Գյուղաշ-  
ցիական այս շարժումը հիմնականում ուղղված եր հո-  
գուրականության գեմ, իսկ վերջնիս դեմ ուղղված  
լինելու պատճառը մեղ հայտնի յե նախորդ գլխից:  
Միջնադարում, յեկեղեցին լինելով շահագործող դա-  
սակարգերի կազմակերպություններից մեկը, հաճա-  
խակի յենթարկվում եր այն բոլոր քաղաքական ու  
գաղափարական հարձակումներին, վորոնք ուղղված  
էին տիրապետող դասակարգերի գեմ:

«Ֆեոդալիզմի դեմ ուղղված հեղափոխական  
ոպողիցիան նկատվում ե ամբողջ միջնադարի ըն-  
թացքում: Նայած ժամանակի պայմաններին, նա  
հանդեռ ե գալիս մերթ իրրև միստիկա<sup>1</sup>, մերթ  
զորպես բացորոշ ներետիկոսություն, մերթ վոր-  
պես զինված ասլուստմբություն... Միջնադարյան  
հերձածողության մյուս յերկու ձեռքի մեջ գեռած  
տասներկույթերորդ դարում մենք արդեն անհնում  
ենք բյուրգերական և զյուղացիական-պլեբեյա-

<sup>1</sup> Տվյալ դեպքում խնդիրը վերաբերում է կրոնական միս-  
տիկային: Կրոնական միստիկներն ընդունում ենին, վոր աստծու  
և մարդու անմիջական հարաբերությունը նարագոր և և վոր այս  
հարաբերությունը մարդու խկական կրոնի հիմքն և կազմում  
դրաժնականապես սա նշանակում եր, վոր աստծու և մարդկանց  
միջն վոչ մի միջնորդ չպիտի լինի, ինչպիտին պատն և, յեպիսկո-  
պոս և քահանան, և վոր պիտի ազդաբարեր վոր ամեն մի աշ-  
խարհական կարող և քահանա լինել: Այսպիսով, միջնադարյան  
կրոնական միստիկան քաղաքական տեսակետից մի յուրահամուկ  
բողոք եր, վարն ուղղված եր հոգեւրականության իդեալան (և  
նյութական) հնումների դեմ: (Յնգելու—«Քերմանական զյուղա-  
ցիական պատերազմը», ծանոթ. 23, էջ 164):

կան ոպողիցիայի միջն յեղած այն ներհակու-  
թյան նախնական պրտահայտությունները, վորի  
հետևանքով զյուղացիական պատերազմը կորսակ  
մատնվեց: Այս ներհակությունը շարունակվում  
ե ամբողջ հետնադարույն միջնադարի ընթացքում<sup>1</sup>:

Հայաստանում, Արևմտյան Յեվրոպայի նման,  
միջնադարյան ճորտերի ու ոլերեյական մասսաների  
քողոքները և ընդգլուխները ֆեոդալների դեմ կրել են  
կրոնական բնույթը ու հաճախ հանգես են յեկել վոր-  
պես հակամարտ դասակարգերի պայքար: XVII դարի  
ակզբին այսպիսի մի շարժում յերևան և գալիս Հայաս-  
տանում զյուղացիության կողմից այդ շարժմանը  
մասնակցել են նաև զյուղական հոգեւրականության  
ամենասորին տարրերը:

Մեր քննությունից պարզվեց, վոր կղերակա-  
նությունը միասարը չեր և կազմված եր տարբեր  
խավերից: Ինչպես տեսանքը, նրա մեջ կային հսկայա-  
կան կալվածների, հոգերի ու նախերների տերեր և  
զյուղական քահանաներ ու քարոզիչներ, վորոնք չու-  
նեյին առաջինների հարստությունը: Հայաստանի  
կուսակրոն հոգեւրականության հերթարխիան—սահ-  
պուխքը, կազմված եր՝ կաթողիկոսից, յեպիսկոպոսնե-  
րից և արեղաներից: Այս հերթախիան իր ձեռքումն եր  
կենարունացրել ընդգրածակ հողային տարածություն-  
ներ և այդ տարածությունների վրա ընակվող բազ-  
մաթիվ ճորտերն ու հարկատու զյուղացիներն ամե-  
նաբիրտ կերպով շահագործվում եյին: Ահա այս դասի

<sup>1</sup> Ենգելու—«Քերմանական զյուղացիական պատերազմը», էջ  
47—48:

գեմն և ուղղվում առաջին հերթին գյուղացիության և  
նրա հետ կապվող քահանաների պայքարը.

«Հոգեորականությունը բաղկացած էր յերկու՝  
միմյանցից միանգամայն տարբեր գասակար-  
գերից։ Հոգեորական հիյերարխիան, — յեպիսկո-  
պոսներն ու արքեպիսկոպոսները, աբբաները,  
վանահայրերն ու մայրապետները և մյուս պրե-  
լատները, — կազմում էր արքանության գասակար-  
գը։ Յեկեղեցական այս բորձաստիճան պաշ-  
տոնյաները կամ սոսկ կայսրության հետ կապ-  
ված իշխաններ եյին, կամ թե այլ իշխանների  
վեհապետության ներքո գանվող փետականեր  
վորոնք իշխում եյին լայնատարած յերկրամասե-  
րի վրա՝ յենթարկելով իրենց իշխանությանը  
բազմաթիվ ճորտեր և հարկատու գյուղացիները  
իրենց հպատակներին նրանք վոչ միայն ազնվա-  
կանների և իշխանների նման անինա շահագոր-  
ծում եյին, այլև այս անսակետից նրանք ա-  
ռավել ևս անամոթաբար եյին վարդում։ Կոպիս  
բոնության հետ միասին նրանք գործադրում  
եյին կրոնական բոլոր հնարքները, տանջանք-  
ների, սարսափների հետ միասին շարժման մեջ  
եյին գնում բանազրանքի յերկյուղը, մեղքերի  
թողության մերժումը և խոստովարանի բոլոր  
ինսրիգները, վորպեսզի իրենց հպատակներից  
կորդին նրանց վերջին ստակը կամ ավելացնեն  
յեկեղեցական կալվածքները»։

«Կողերականության պլեբեյական մասը բաղ-  
կացած էր գյուղի և քաղաքի քարտիչներից։  
Նրանք չեյին մտնում յեկեղեցու ֆեոդալական  
հիյերարխիայի մեջ և այդ հիյերարխիայի հարցա-  
տություններից բաժին չունեյին։ Նրանց աշխա-  
տանքն ավելի նվազ չափով էր ստուգիում, և  
չնայած վոր այդ աշխատանքը յեկեղեցու համար  
ավելի կարևոր նշանակություն ուներ, տվյալ  
գեպրում գա այնպիս անհրաժեշտ չեր համար»

վում, ինչպիս զորանոցներում կենտրոնացած  
վարդապետների վոստիկանական ծառայությու-  
նը։ Այդ իսկ պատճառով քարոզիչները շատ ա-  
վելի վատ եյին վարձատրվում և նրանց հասույց-  
թը չափազանց սուզ եր։ Իրենց բյուրգերական  
և պլեբեյական ծավանքով նրանք բա-  
վական մոտ եյին կանգնած ժողովրդական զանգ-  
վական վագի կամականքով։ Սովորաբար նրանք  
մասնակցություն ունեյին այդ ժամանակ անդի-  
ւունեցող շարժումների մեջ, վորպիսի հանգաման-  
քը բացառիկ յերկույթի էր վարդապետների հա-  
մար։ Այդ շարժումների համար նրանք տալիս-  
եյին անօպարաններ ու գաղափարախոսներ և դրա-  
համար ել նրանցից շատերը, վորպես պլեբեյե-  
րի ու զյուղացիների ներկայացուցիչներ, կրն-  
քում եյին իրենց մահկանացուն կառափատեղե-  
րում»<sup>1</sup>։

Ենգիլսի բնութագրած այդ հոգեորականությանը  
համապատասխանում է նաև միջնադարյան չայտա-  
նի հոգեորականության հիերարխիան։ Յեթե յեպիս-  
կոպոսներն ու վարդապետները հանդիս եյին զալիս-  
վորպես հոգեորականության արիստոկրատիկ մասը,  
վորպես խոշոր հարստությունների տեր էր, ապա, զրա հա-  
կառակ, հոգեորականության ստորին մասը — քահա-  
նաներն ու քարոզիչները — զուրկ եյին այդ հարստու-  
թյունից։ Նրանք նույնիսկ շատ վատ եյին վարձա-  
տրվում, հետեւաբար հոգեորականության այս մասը  
չաշտ աչքով չեր կարող նայել կղերականության վեր-

<sup>1</sup> Ենգիլս-«Գերմանական գյուղացիական պատերազմ»  
էջ 35—36։

Դասիավի վրա, վոր ուներ իր «զինչս առանձին, այսի և բուրաստան, փեթակ և տուն, և մարան, և համբարանցոց, և զմուտս ստացուածոց, նաև զմուտս հաստրակաց վանիցն ու մասունս արարեալ», հագնում եյին «որպէս աշխարհական, և զմարմնաւոր իշխանս փափուկ և աղնիւ զգեստիւ պճնէին» և «բողոք տարին ուախք և դինի և միս անխտիր», ուստի ստորին հոգմորականությունը պետք և պայքարեր բարձր հոգեփորականության դեմ: Այդ պատճառով հոգեփորականության ստորին մասի պայքարը կալվածատեր հոգեստրականության դեմ համընկնում եր գյուղացիական մասսաների մղած պայքարի հետ:

XVII դարի սկզբին Հայաստանում բռնկած գյուղացիական շարժումը զլիավորում եր, ըստ պատմիչների, Մեխլու անունով սարկավագը, վորն իր ծագումով պատկանում եր հոգեփորականության պլեբեյական մասին: Զաքարիա սարկավագի ասելով՝ Մեխլուն իր սկզբնական գործերն սկսում ե Աղվանից աշխարհում և ինքն ել, ըստ Զաքարիայի, Գանձակ քաղաքից եր:

«Քանզի այլ մի ազգաւ Աղուան, որ այժմ ասեն Ուտի, ի Գանձակ քաղաքէ Աղուանից...»<sup>1</sup>:

Մեխլուն իր հոգեոր կրթությունն պատահում է Աղվանից Հովհաննես VIII կաթողիկոսի ժամանակ, Գանձասարի վանքում և ձեռք ե բերում սարկավագի տուիժան: Նա ուներ ճարտար լիզու, այդ պատճառով վանքի գործերով նրան ուղարկում են գյուղերը՝ քաջողություն անելու և վանքի հարկերը հավաքելու համար: Մեխլուն ողտվելով այդ առիթից, զբաղվում

ե քարողչությամբ՝ հոգուա գյուղացիության, ընդդեմ վանքի:

«Իսկ նա գնացեալ ձևացոյց զինքն վարդապետ, և քարողէր թիւր և անուղիղ հայհոյանու և չարաբանութիւնու»<sup>2</sup>:

Մեխլույի պրոպագանդան ընդդեմ Գանձասարի, այսինքն՝ բարձր հոգեորականության, ուներ իր պատճառը: Նախ՝ Մեխլուն պատկանելով հոգեորական պիերեյական մասին, իր հայացքներով տարբերվում եր վիրնախավից, յերկրորդ՝ դգոհությամբ եր նայում հոգեորականության վերնախավի վրա, վարովհետեւ հավաքված հարկերը յուրացնում եր կղերականության արիստոկրատիկ խավը և նղիացած կյանք եր վարում, և յերրորդ՝ նա, վորպես վանքի քարողից և հարկ (տասանորդ) հավաքող, յերկար ժամանակ շըրջելով գյուղերում, ծանոթանում և գյուղացիության տնտեսական ծանր գրության ու գառն վիճակին և զրանցից յելնելով, գավառում՝ վոխանակ վանքի համար աշխատելու, գործում և նրա դեմ՝ պաշտպանելով գյուղացիներին և կղերականության պլեբեյական մասին:

Գանձասարում շուտով լուսմ են Մեխլույի պրոպագանդայի մասին, կաթողիկոսը հետ ե բերել տալիս նրան, կարգալույժ անում ու պատվիրում ե մնալ վանքում վորպես «ծառայ միաբանիցո», և «անուղում Մուղուսի»<sup>3</sup>: Սակայն խնդիրը զրանով չի վերջանում, գործը հասնում և Գանձակի իշխան Դավութ խանին վորը պայքարի մեջ լինելով այդ ժամանակ Գանձասարի կաթողիկոսի հետ, իր նպատակներին հասնելու

<sup>1</sup> Զաքարիա—«Պատճագրութիւն», Ա. հատ., գլ. իթ., եջ 47:

<sup>2</sup> Նույն տեղ, եջ 48:

Համար, բռնում և Մեխլույի կողմը։ Նա բերել և տա-  
լիս կաթողիկոսին, տուղանում և հարկադրում ենքան,  
վոր Մեխլույին վերադարձնի իր նախկին իրավունք-  
ները և արտօնություն տա ազատ քարողելու։ Կաթո-  
ղիկոսը յերկյուղից կատարում է խանի պահանջը՝ վե-  
րադարձնում և Մեխլույին հոգեոր կոչումը։ Մեխլուն  
վերականգնելով իր հոգեոր կոչումը սկսում ե բացա-  
հայտ կերպով պրոպագանդա անել ընդդեմ Գանձասա-  
քի, իսկ հետագայումն ել իր պայքարն ուղղում ե վողջ  
հոգևորականության վերնախավի գեմ, վորն աճելով՝  
ընդհանուր առմամբ ուղղվում և թե՛ աշխարհիկ և թե՛  
հոգեոր ֆեոդալների գեմ։

Մեխլույի պրոպագանդան շուտով դուրս է գալիս  
Գանձասաքի նեղ շրջանակներից և տարածվում է  
հարևան գավառներն ու շրջանները, իսկ հետագայում  
ել՝ դեպի Արարատյան աշխարհը։ Նրան հետևում են  
բարձրականացափ մարդիկ, թվով ավելի քան 500 հոգի։  
Այդ 500-ի միջից Մեխլուն ընտրում է 12 կարիճ և  
պորեղ մարդիկ, վորոնց մեջքին կապում և թուր, իսկ  
ձեռներն ե տալիս լախտ, «որ է թոփուզ»։ Այս մա-  
սին ուշագրավ տեղեկություն ե տալիս Զաքարիա  
սարկավագը։

«Եւ եկեալ յարեցան ի նա մարդիկ աւելի  
քան կ՛ 500», ոչ միայն գաենիկ աշխարհականք  
և ռամիկք, այլ և տգետք երիցունք, և փարթամ  
և մեծազգի մարդիկք։ Եւ ի նոցանէ ընտրեաց  
ԲԺ [12] կարիճ և գորեղ մարդիկք, և ետ ի ձեռս  
նոցա լախտ՝ որ է թօփուզ, և կապեաց թուրս  
զմէջօքն նոցա...և հրամայէր նոցա առնել՝ զոր  
ինչ ինքն կամեր. թէ՛ ծեծէր, թէ՛ կալանո առնէր,  
նոքօք առներ զամնայն»<sup>1</sup>։

<sup>1</sup> Զաքարիա—«Պատմազրութիւն», հատ. Ա., գլ. իթ, եջ 49։

Մեխլույի գործունեյության սկզբնական շրջանի  
մասին վորոշ տեղեկություններ հազորդում ե նաև  
«Ժամանակազրության» հեղինակ Գրիգոր Դարանազ-  
րին։

«Եւ էր այս Միկոյս յերկրէն յԱրևելից և  
եկեալ ի Սահաթի փոսին յԱրարատին և յայլ  
շրջակա գաւառն նոցա, և վարդապետական ու-  
նուամբ ըջելով յամենայն արևելայօն կոյս մին-  
չե ի Պարսկապատան...»<sup>2</sup>։

## II

Արդ՝ ինչն եր կազմում Մեխլույի պրոպագանդա-  
յի հիմքը, վորին լսում ու հետևում եյին աշխատավո-  
րական մասսաները կամ «զոհեիկ աշխարհականք և  
ուամիկք» և «ագէտ երիցունք»։ Ըստ մատենազրական  
աղբյուրների՝ նրա քարոզն աչքի յեր ընկնում յերկու  
ուղղությամբ, առաջին՝ անընչասիրություն և սակա-  
վապեառթյուն, և յերկրորդ՝ հավասարություն։ Մեխ-  
լուն իր քարոզով նպատակ ուներ վերականգնել նախ-  
նական համայնքների հավասարեցման գաղափարը։ Նա  
պահանջում եր սոհեղել այն հավասարությունը, վոր  
պոյություն ուներ նախնական համայնքների անդամ-  
ների միջն, պահանջում եր նավասարություն կերա-  
կանության, նույնիսկ ազնվականների ու գյուղացի-  
ների միջն։

«Եւ կեղծաւորեալ ոչ առնոյր ինչ յումեքէ...  
և ասէր, Քրիստոսի աշակերտացն չէ՛ պիտոյ  
ստանալ ուկի կամ արծաթ, և կամ զգենուլ հան-  
գերձս ազնիւս, այլ մազ և ուլ պիտոյ է նոցա  
զգենուլ»<sup>2</sup> (ընդգծումը մերն ե—Հ. Հ.)։

<sup>1</sup> Գարանցից—«Ժամանակազրութիւն», եջ 456։

<sup>2</sup> Զաքարիա—«Պատմազրութիւն», հատ. Ա., գլ. իթ, եջ 49։

Բնդգծված նախաղասությունը մեզ հիշեցնում է քաղեմի համայնքների հնագույն գաղափարները: Զաքարիայի հաղորդած այս տեղեկաւթյունը հաստատում է նաև Դարձնաղբին:

«...ոչ ուշէր և ոչ բարեկը և ոչ առնոյր ինչ յումքէ և էք քրծազգեաց և խարազնազդեսա...»<sup>1</sup>:

Մեխլույի քարոզած հիմնական ու դիմավոր գաղափարը—դա հավասարությունն էր—ընչքի՝ գույքի՝ հավասար բաժանումը մարդկանց միջև: Մեխլուն այս դրույթն առաջ քաշելով, ձգտում էր հարցած հասցնել սեփականատեր այն արեգաներին, վորոնք ինքնուրույն կալվածատիրական տնտեսություն եյին վարում և անվերջ աշխատում եյին հափշտակել գյուղացիության ունեցվածքը: Նրա քարոզած հավասարեցման գաղափարի մասին հետաքրքրական տեղեկություն է հաղորդում Զաքարիա սարկավագը:

«...ոչ առնոյր ինչ յումքէ, այլ ձեռամբ ԲԺ-իցն [12-ից] առնոյր և բաժանէր Շ-իցն [500-ից] և ասէր, Քրիստոսի աշակերտացն<sup>2</sup> չէ պիտոյ ստանալ ոսկի կամ արծաթ, և կամ զգենուլ հանդիրձս աղյուս, այլ մազ և շալ պիտոյ է... Եւ ինքն զգեցնալ էր զմագեղէնսա...»<sup>3</sup>:

Այս փաստը ցույց է տալիս, թե այն, ինչ ձեռք են ըերում տասներկու թոփուզավորները, Մեխլուն վերցնում և հավասար չափով բաժանում են իրեն հետողների վրա: Սա նշանակում է, որ նրա քարու-

<sup>1</sup> Դարձնաղբի—«Փամանակագրութիւն», մասն Բ., եջ 456:

<sup>2</sup> Մեխլուն տասներկու թոփուզավորներին, որը ընարել էր իրեն հետող 500 մարդկանցից, համարում էր Քրիստոսի ստաներկու աշակերտներ, իսկ իրեն՝ Քրիստոս:

<sup>3</sup> Զաքարիա—«Պատմագրութիւն», հատ, Ա., գլ. իթ, եջ 49:

զած ծրագրի առանցքը կազմում է հավասարեցման գաղափարը:

Մեխլույի քարոզած հավասարեցման այս գաղափարը ծաղրի յենթարկվում պատմիչների կողմից, վորոնք նրան համարում են կախարդ և հափշտակող:

Մեխլույի հավասարեցման գաղափարները բղխում եյին գյուղացիական աշխատավորական մասսաների անմիջական պահանջներից, այդ և պատճառը, վոր Մեխլույի շուրջը շուտով հավաքվում է 500-ից ավելի մարդ, իսկ Դանձասարից գուրս գալուց հետո, գյուղացիական լայն մասսաները հետևում եյին նրան ու նրա քարոզած գաղափարներին:

XVII զարի սկզբին տեղի ունեցող գյուղացիական այս շարժումը, վորի վլուխ եր կանգնած Մեխլուն սարկավագը, առաջին հերթին ուղղված եր սեպարանի վեմ, և իր եյությամբ մի պայքար եր ընդգեմ իշխող և շահագործող գասակարգի, իսկ մինչև վոր շարժումն այդ ընույթը կստանար, անհրաժեշտ եր առաջին հերթին մասսաներին պայքարի կոչել հոգեսր ֆեռզալների վեմ, վորովհետև, ինչպես վերը նշեցինք, շահագործող գասակարգի այդ խանն եր ամենից առաջ աչքի ընկնում իր շահագործումներով ու կեղեւություններով:

«...յուրաքանչյուր պայքար ֆեռզալիոմի զեմ այն ժամանակ պետք է կրոնական զենատավորում ընդուներ, ուղղվեր առաջին հերթին յեկեղեցու գեմ»<sup>4</sup>:

Ահա թե ինչու Մեխլուն իր ծրագիրը պիտի

<sup>1</sup> Ենգիլս—«Սոցիալիզմի զարգացումը ուսուպիայից գեղի դիտությունն», եջ 19:

զդեստավորեր կրոնական քողով և առաջին հերթին  
պայքարի կոչեր մասսաներին ընդգետ յեկեղեցու:

Գյուղացիության գաղափարախոսն իր գաղա-  
փարներն ու մտքերը զրի յե առել իսկ իր ասածնե-  
րը հաստատելու համար զանազան գրքերից ասույթ-  
ներ հավաքելով և միացնելով իր քարոզած գաղա-  
փարների հետ, կազմել եր մի ժողովածու, վորից հա-  
ճախ մեջբերումներ եր անում իր քարոզությունների  
և վիճարանությունների ժամանակ, դատապարտելով  
տիրող գաղակարգի շահագործումը, կաշուակերու-  
թյունը, զոփողականությունը և ընչասիրությունը, մի  
գաղակարգ՝ վորն անխնա կողոպտում եր աշխատավո-  
րական մասսաներին: Այդ մասին Զաքարիան գրում ե.

«Եւ ունէր գիրք մի ժողովածու և նովաւ  
ասէր՝ զի՞նչ որ ասէր: Եւ բացեալ զգիրքն, և ասէ,  
ոս գրեալ է վասն սեազիլսոց. զի ասէ, մի ստա-  
նայք՝ մի ոսկի և մի արծաթ և այլն»<sup>1</sup>:

Այս հատվածը Մեխլուն կարդում և Յերեանի  
ըերգում, յերբ Ամիրգունա խանի կողմից բանավեճ և  
հրահրվում Մեխլույի և կաթողիկոսի միջև: Մեզ ան-  
հավանական չի թվում, վոր այդ կարգացած մեջե-  
րումը լիներ ասավածաշնչից, սակայն գիրքն աստվա-  
ծաշունչ չեր, այլ մի ժողովածու, վորտեղ հեղինակն  
ամփոփել եր տարբեր յերկերից վերցված ասույթներ  
և գյուղացիների առաջադրանքներից քաղված խըն-  
դիրներ: Ինչպես յերկում ե, գյուղացիության գաղա-  
փարախոսը պատահականության չի մատնել իրեն ա-  
ռաջադրված խնդիրները. նա հավաքել և գրի յե առել  
այն ամենը, ինչ վոր սազական ու հարմար եր աշխա-  
տին ամենը,

սուլորական մասսաների ու հոգևորականության պլե-  
յեյական տարրերի համար: Վոր ժողովածուն ավետա-  
րան չի յեղել, այդ հաստատվում և Դարանացու հե-  
տեւյալ խոսքերով:

«...եւ ոչ օրինոք աստուածաշունչ գրոց վկա-  
յութեամբ խօսէր և ոչ կանոնոք սուրբ հարցն  
երից սուրբ ժողովոցն և ոչ սուրբ հարանց գրոցն,  
այլ մատացածին բանիւք յինքենէ՝ զոր ինչ բղիքը  
ի չար դիւական ողուցն՝ զայն խօսէր և մաքա-  
ռէր ընդ ուխտականուած»:

Այս խնդրում ձիշտ չե ուսումնասիրովներից մե-  
կը, վոր տատանվում ե և վճռական խոսք չի ասում  
ժողովածույի ինչ լինելու մասին, քանի վոր Դարա-  
նացին պարզորդ ասում ե; Վոր Մեխլուն սուրբ  
գրքից և յեկեղեցական կանոններից չեր խոսում, այլ  
ասում եր այն, ինչ վոր ինքը ցանկանում եր: Այս-  
պիսով, պարզվում ե Մեխլույի քարոզած գաղափարնե-  
րի եյությունը, մի գաղափարախոսություն, վորը  
գղխում եր «գոհենիկ ուամիկների» շահերից:

Մեխլույի գլխավորած շարժման մասին սպեցիֆիկ-  
ացիոնալիստներից մեկն այն կարծիքն է հայտնում,  
վոր այդ շարժումը հերձվածային ե և այդ հերձվածի  
գաղափարախոսի քարոզները չափավոր ուժորմիստա-  
կան ընույթ են կրում, և Մեխլուն սկզբունքային տա-  
գածայնություններ չունի հայ յեկեղեցու հետ, միայն  
ըննադատում ե նրա բացերն ու թերություններն  
ունից:

Սպեցիֆիկ-նացիոնալիստներն իրենց այս նոր  
դրույթներով մի անգամ ևս փորձում են հաստատելու  
հայ բուրժուական պատմագրության այն թեղը, վոր

<sup>1</sup> Դարանացի—«Ժամանակագրութիւն», էջ 457:

իրը թե հայերի մեջ գասակարգային պայքար չի յեղակու վոր հայ ժողովրդի անցյալ պատմությունն իրենից ներկայացնում է մի հոտի, մի հովի պատմություն, վոր այդ ժողովրդին շահագործել են միայն ոտարները: Բուրժուական պատմագրությունն այս թեզը գնելով՝ ձգտում եր հայ բանվորներին կտրել Անդրկովկասի մյուս ազգություններին պատկանող բանվոր գասակարգի միասնական ինտերնացիոնալ պայքարից և հետ պահել նրանց հայ կապիտալիստների գեմ պայքար մղելուց: Իրենց այս նպատակին հասնելու համար, նրանք ամեն կերպ աշխատում են մեր ժողովրդի անցյալ պատմության մեջ հանդես յեկող աշխատավորական մասսաների ընդվորմաներն ու ապատամբությունները մեկնաբանել վորպես կրոնական աղանդների պայքար: Այդպես են մեկնաբանվել թոնդրակեցիների, Դավիթ Ծարեցու և այլ շարժումները: Այդպես ե մեկնաբանում սպեցիֆիկանացիոնալիստը XVII դարի սկզբներին հանդես յեկող Մեխլույի վլխավորած այս շարժումը Այդ շարժման գաղափարախոսն ասաւ չին հերթին պայքարն ուղղել եր կարվածատեր հոգեվորականների գեմ, վորովհետև նրանք եյին առաջին հերթին հափշտակում գյուղացիության ունեցվածքը՝ Այս հանգամանքն առաջին հերթին սրում եր գյուղացիության թշնամությունը հոգեստրականության գեմ: Հետեւաբար, զրանից յելնելով՝ չի կարելի շարժումը բնութագրել վորպես աղանդավորական: Գյուղացիական գաղափարախոս Մեխլուն նախ և առաջ վարական կազմակերպում այդ յեկեղեցու սպասավորների գեմ, հետեւաբար նա պայքարում և մարտնչում է վոչ միայն գաղափարով, այլև ուժով:

Հստ Զաքարիա սարկավագի, Մեխլուն Քանաքեռի յեկեղեցում քարոզ կարգալիս՝ կոչ և արել գյուղացիներին՝ կոտորել նեազգութներին.

«...եկեալ նստաւ ի վերայ սեղանին, և զոտոն կախեալ ի վայր՝ և զօղանջեր գէպ յարեւդայն՝ և ասէր, ով ոք սր սպանանէ աբեղայ մի, այլ ոչ զայ հարցումն մեղաց նորա, այլ երթայ յարքայությունն Աստուծոյ»<sup>1</sup>:

Այս նույն բանը հաստատում է նաև «Ժամանակագրութիւն» աշխատության հեղինակ Դարանազին:

«Ոչ երիցոյ և ոչ աշխարհականաց հակառակութիւն չունէր, այլ միայն ի հետ սկսվիլոց: Հետ լաւացն և վատացն միապէս մարտնչեր և մաքառէր...»<sup>2</sup>:

Զաքարիայի աշխատությունից արված մեջքուումից պարզ ու վորոշ յերկում և Մեխլույի սկզբունքային պայքարը յեկեղեցու ու նրա բարձր սպասավորների գեմ: Յեթե յեկեղեցին ու նրա գաղափարախոսուները գտնում եյին, վոր «արքայություն» գնալու համար պետք է ծառայել հարկ վճարել և հարգել յեկեղեցու սպասավորներին, ապա Մեխլուն, զրան հակառակ, քարոզում եր, վոր «արքայություն» գնալու համար պետք և արեղա սպանել: Մեխլուն իր այս գաղափարով մարտնչում եր վոչ միայն անհատ հոգեվորականների, այլև յեկեղեցու սպասավորների՝ արիստոկրատիայի ու նրա վերնախավի գեմ, վորը հանդիսանում եր այդ ժամանակաշրջանի շահագործող շասերից մեկը:

<sup>1</sup> Զաքարիա—«Պատմագրութիւն», հատ. Ա., գլ. իթ., էջ 52:

<sup>2</sup> Դարանազի—«Ժամանակագրութիւն», էջ 457:

Աշխարհիկ ու հոգեոր ֆեոդալների կողմից ազգաբնակության անխնա շահագործումն ու կողոպուտը հանդիսանում է եյին այն հիմնական բաղան, վորթվառ XVII դարի սկզբին տեղի եյին ունենում գյուղացիության դժունություններն ու ընդվզումները տիրողների գեմ: Այդ շահագործումն ու կողոպուտն եյին պատճառը, վոր Մեխլույի քարոզներն արագությամբ տարածվում եյին մասնաների մեջ, իսկ ինքը՝ Մեխլուն ուր ել վոր գնում եր, մեծ ընդունելություն ել: Գտնում ժողովրդի կողմից: Բայց, ինչպես ասել ենք՝ Մեխլուն իր պայքարն սկզբում ուղղել եր կուսակրոն հոգևավորականության գեմ: Նրա աբեղակածության մասին պատմիչները հազորգում են հետաքրքիր տեղեկություններ, վորոնք նույնիսկ զավեշտական բնույթը են կրում: Ահա այդ տեղեկություններից մի նմուշ:

...եւ որպէս զօրացուցանելով զայս դիւարնակ Մեխլուն...ուր և գտանիցէ թէ արեղայ անուն, թէ եպիսկոպոս անուն և թէ վարդապետանուն, սպանանիցէ և զրագումս հալածեցէ յաշխարհէն Հայոց, որպէս արար բազմաց»<sup>1</sup>:

Մեխլույի այս աբեղակածությունը կրում է մասսայական բնույթ, վորի մասին, չնայած մատենագրերում պակասում են ուղղակի տեղեկություններ, բայց և այնպես մի բան պարզ ե, վոր այս շարժումները պայքարի մի կողմով պետք ե ուղղված լիներ նաև աշխարհիկ ֆեոդալների, խաների ու մելիքների գեմ:

Հստ մատենագրական տեղեկությունների՝ Մեխլույի աբեղակածությունը տեղի ուներ վնչ միայն պաղապարով, այլև հրով ու սրով: Դարանալցին պատմում ե, վոր մի անդամ Մեխլույի

իր թոփուղավորների հետ հետապնդում եր մի յեպիսկոպոսի և մի աբեղայի՛ սպանելու համար, իսկ նբանք խույս տալով՝ փախչում, մտնում էն մի այրի կնոջ բնակարան և թագնվում ցորենի փեթակի (ամբարի) մեջ: Աբեղակածություններն իմանալով, վոր ցորենի մեջ մարդ ե մտել, նիզակով հարվածում էն «ի մէջ ցորենոյն»: «Զգիտացաք, — շարունակում է Դալրանալցին, — մեռանիլն և զիեալ նոցա»<sup>2</sup>: Իսկ Զաքարիայի ասելով՝ Մեխլույի քարոզներից ազդված, շատերը փորձում են արեղասպանել, վորովհետեւ, ինչպես զիտենք, ըստ նրա քարոզների, ով վոր աբեղասպաներ, կդնար արքայություն: Նրա քարոզներից ազդված՝ արեղասպանելու փորձ ե անում Քանաքեռի թութակենց Հակոբը: Յերբ նա գնում է Մեխլույի մոտ իր մեղքերը խոստովանելու և թողություն ինդրելու, ստանում է այսպիսի պատմեր:

«...Ե՛թ սպան աբեղայ մի... յայնժամ լիցի թողութիւն մեղաց քոց: Եւ հաւատացեալ յիմարն այն, և ի նոյն գիշերին գնացեալ ի գուռն վանիցն՝ և սպասէր՝ զի թերեւ ելցէ Միքայէլ Աբեղայն, այս այն Միքայէլն է՝ զոր ի մէջ ձառիս յիշեցաք, զի նա եր փոքր քան զայլսն: Եւ անսանէ՝ զի ահա եկն Փիլիպպոս Եպիսկոպոսն: և այրն Յակովը յարեւաւ ի վերայ նորա, և կառկարեաց զնանալին<sup>3</sup> ի վերայ գլխոյ Եպիսկոպոսին: Եւ ասէ Եպիսկոպոսն, գծուեցանը Յակովը Եւ ասէ Յակովըն, մեղա քեզ՝ Տէ՛ր Փիլիպպոս. զի ես կարծեցի՝ եթէ Միքանն ես, զի առաջին անունն Միքայէլին՝ Միքան էր: Եւ պատմեաց նմա Յակովըն զամենայն»<sup>4</sup>:

<sup>1</sup> Դարանալցի—«Ժամանակադրութիւն», եջ 472:

<sup>2</sup> Կացին, չ. Հ:

<sup>3</sup> Զաքարիա—«Պատմագրութիւն», հատ. Ա., գլ. ԻԹ, եջ 52:

<sup>4</sup> Քարանալցի—«Ժամանակադրութիւն», եջ 470:

Բացի գրանից, նույն Զաքարիան ասում եր, վոր Մեխլուն Աղվանից աշխարհից Գեղամա գավառն անցնելիս իր հետ տանում եր կտպված վիճակում հինգ արելա. «Եւ եկեալ յաշխարհէն Աղուանից՝ բազմութեամբն գայ ի գաւառն Գեղամայ և կապեալ ուներ Ե արեղայ...»<sup>1</sup>:

Մենք կարծում ենք, վոր այս փաստերն անդիմիկ յեն և միաժամանակ այն հաստատուն կովանաներն են, վորոնց վրա հիմնվելով, համարձակ կարելի յե ասել վոր Մեխլուն պայքարում եր կուսակրոն հոգեորականության դեմ՝ վոչ միայն գաղափարախոսությամբ, այլև արագ ու հրավի: Սակայն նա մենակ չեր պայքարում, նրա հետ միասին պայքար եյին մըում վոչ միայն տասներկու թոփուզավորները, այլև 500 հոգին, վոր միացել եյին նրան և, վերջապես, այն բազմաթիվ «գուեհիկ աշխարհականք» և «տգէտք երիցունք», վոր անվերջ հավաքում եյին նրա շուրջը և սովորացնում նրա ապատամբ բանակը:

Այսպիսով, պարզվում են Մեխլույի գլխավորած շարժման դասակարգային բնույթը և նրա առաջադրուած խնդիրներն ու նպատակները: Այժմ մեզ մնում է պարզել նրա գլխավորած շարժման ընթացքը, շարժիչ ուժերը և հետեանքները:

### III

Մենք արդեն նշել ենք, վոր Մեխլույի գործունեյությունն սկսվել եր Աղվանից աշխարհում՝ Հոլհաննես V III կաթողիկոսի ժամանակ (*1579—1602*)<sup>2</sup>: Սակայն հետագայում, XVII դարի առաջին քառոր-

դում, նրան և նրան հետեւող մասսային տեսնում հնգ Աղվանից աշխարհից դուրս, Արարատյան յերկրում՝ Ըստ մատենագրական տեղեկությունների՝ Մեխլուն Աղվանից աշխարհից դուրս դալու ժամանակ ուներ ավելի քան 500 հետևող. «Եւ եկեալ յարեցան ի նա ժամանակի աւելի քան գե...»<sup>3</sup>: Այս թիվը գնալով ստվարանում եր Գանձասարից դեպի Յերևան շարժվելու ձանապարհին, և վորքան մոտենում եյին Արարատյան աշխարհին, այնքան ավելանում եր հասարակական ուարքեր խավերի մասնակցությունն այդ շարժմանը:

Մեխլույի շարժումն ընթանալով դեպի Հայաստանի միջնաշխարհը՝ Գեղամա գավառի վրայով անցնուած է գեպի կոտայքը և այնտեղից՝ Յերևան քաղաքը: Այդ յերկար ձանապարհորդության ընթացքում նրան հետեւողների թիվն այնքան ե ավելանում, վոր տեսնողների վրա մարախի տպավորություն ե թողնում.

«...բազմութիւն մարախոց ընդ իւր շրջեցուցանելով, և որք հակառակին և ոչ լսեն հրամանացն՝ զսեազուխն ի ձեռն չտալով նմա, նա հրաման տուեալ մարախոցն ուտել զամենայն գամատակ և զխոտ երկրին և սպառել զամենայն պտուղ անդոյ նոցա, և ստայօդութիւնս բազում»<sup>4</sup>:

Դարանազու աշխատության այս հատվածն ուշագրավ է նաև այն տեսակետից, վոր հաստատում է շարժման մասսայական լինելը: Անշուշտ, Մեխլույի հետ շրջագայող մասսան «մարախ»-ների բազմություն չեր, այլ՝ աշխատավորական մասսաների բազմություն: Այդ բազմությունն Աղվանից աշխարհում կազմված

<sup>1</sup> Զաքարիա—«Պատմագրութիւն», հատ. Ա., գլ. իթ, էջ 49.

<sup>2</sup> Այս թվականը մոտավոր հշտությամբ է վերցված. Հ. Հ.:

Եթ հինգ հարյուր հոգուց, սակայն հինգ հարյուր հոգ գին «մարտի» աների բազմության տպավորություն չեր կարող թողնել Այսպես ուրեմն, նախ՝ Ազգանից աշխարհից մինչև Արարատյան յերկիր համակը Մեխուլույի հետեղների թիվը անշափ ստվարացել եր, յերկորորդ՝ արեղահալածը պահանջում եր, վոր իրեն հանձնեն բոլոր սեազգութիւն արեղաներին, իսկ յեթե չհանձնեցին, նա կհրամայեր իր հետ շրջագայող մարդկանց հափշտակել յերկրի բոլոր «վաստակ»-ը, այսինքն՝ թալանի ու ավարի պիտի տար հարուստների վողջ ունեցվածքը։ Այս հանգամանքն սպառնում եր վոչ սիայն բարձր հոգեորականության, այլև ամբողջ շահագործող դասակարգին՝ թե հոգեար և թե աշխարհիկ Յեվ իրոք, Մեխուլոյի հետեղների բազմությունը Քանաքեռի և Նորքի բարձունքները չհասած, կազմում եր մի հոկայական բանակ և տեսնողի վրա ուժեղ տպավորություն եր թողնում։ Յերբ Ամիրգունա խանը գուրս և գալիս բերդից և տեսնում և այդ ահսելի բազմությունը, զարմանում ե.

«Իսկ Ամիրգունայ խանն ելեալ ի բերդէն՝ երթայր ի զնին, և հայեցեալ տեսնողի վրա ուժեղ զարնուրեալ հարցանէ, ո՞ն զի՞նչ է գումարն այն։ Ասեն, նա է Մեխուլ բարայն, վոր սպատմէին...»<sup>1</sup>

Այս բոլոր փաստերը ցույց են տալիս, վոր, իրոք Մեխուլոյի գլխավորած շարժումը չափավոր ուժորմիաւական մի աղանդ չեր, ինչպես ներկայացնում են սպեցիֆիկ-նացիոնալիստները, այլ աշխատավորական մասսաների մի շարժում՝ ուղղված առաջին հերթին

իշխող և շահագործող յեկեղեցու ու նրան սպասարկությունը կուսակրոն հոգեորականության գեմ։

Մեխուլուն իրեն հետեղ մարդկանց բանակը թաղնելով քաղաքից գուրս, ինքը տասներկու թոփուղավորների հետ Քանաքեռի վրայով իջնում և Յերեան և մտնում բերդը, վորաեղ նրան սպասում ելին Ամիրգունա խանը, Ավետիս կաթողիկոսը և յերկու յեպիսկոպոս։ Ըստ Զաքարիայի, բերդում Մեխուլոյին քննության յենթարկելուց հետո անմիջապես կազմակերպում են Մեխուլուն ու կաթողիկոսը։ Յերկու վիճողների թարգմանը խանի համար հանդիսանում եր գաւնեցի Զաքար բերդը, վորը հրաժարվել եր արեղայությունից։ Այդ բանապմնանը խանի միջամտությամբ վերջանում և այսպես.

«Եւ ապա ասաց խանն, այս ճշմարիտ է (խոսքը վերաբերում է Ավետիս կաթողիկոսին—Հ. Հ.), և գու հարամզաւալ<sup>1</sup> ես. վասն այն ես զգեցեալ զայդ հանդերձ. զի պատրիս զանմեղ քրիստոնեայոդ։ Եւ հարամայեաց արկանել զնա ի հուսու զնի և խեղդել ի ջուրն. և որքան հանէր զգւուխն ի ջրոյն, և սպասաւորք խանին կոխէին ի ջուրն<sup>2</sup>։

Այս, վոր խանը պաշտպանում եր կաթուղիկուն, գա պատահական յերեւոյթ չեր, այդպես եք պետք ելիներ, վորովհետեւ խանը լինելով Փեղողաւաշխարհիկ թեկ ներկայացուցիչ, լավ եր զիասակցում, վոր վաղ թե ուշ սեազգութիւն արեղաների գեմ մղված պայքարը պիտի ծառանա իր և յուրայինների գեմ վորպես շահագործողների։ Ահա թե ինչու աշխարհիկ

<sup>1</sup> Զաքարիա—«Պատմապրութիւն», հատ. Ա., զլ. իթ., էջ 50.

<sup>2</sup> Զաքարիա—«Պատմապրութիւն», հատ. Ա., զլ. իթ., էջ 51.

Հ հոգեսոր ֆեռդալների պետերը պիտի միանային և  
միացյալ ձևով պայքար մղեցին գյուղացիության զա-  
ղափարախոս Մեխլույի ու նրա հետևողների գեմ:

Խանը բերդում Մեխլույին խիստ պատժելուց հե-  
տո, նախ՝ հրամայում ե ծեծել և կողոպտել տասներ-  
կու «թոփուղագործներին», վարոնք Մեխլույի հետ մտել  
ելին բերդը, իսկ վերջում հրամայում ե հեռացնել  
նրանց Արարատյան աշխարհից: Խանի այս մեղմ վե-  
րաբերմաւնքը Մեխլույի և նրա ոգնականների հանդեպ  
քացարքում ե նրանով, վոր յեթե խանը նրանց ֆի-  
զիկապես վոչնչացներ կամ բանտարկեր, այն ժամա-  
նակ քաղաքից դուրս սպասող ամբոխը, վորն արդեն  
քորբոքված էր, կարող եր սպասամբություն առաջ  
բերել և հարձակվել բերդի վրա: Այդ հանգամանքը  
հաշվի առնելով, խանը բափարարվում ե միմիայն  
մարմնական պատիժներ տալով և ապա՝ բերդից ազատ  
արձակելուց հետո՝ իր ֆառաշներին հրամայում ե  
Մեխլույին աքսորել Յերևանյան աշխարհից:

Չնայած խանի պատիժներին, Մեխլուն և իր հե-  
ռուրդները բերդից դուրս գալուց հետո ուղղակի զի-  
նում են զեպի ամբոխը, վորն սպասում եր նրանց:  
Թվում եր, թե անարգանքից ու պատիժներից հետո,  
աբեղանալածի հետևողների թիվը պիտի պակասեր և  
նրան համակրողները պիտի թողնեցին ու հեռանային  
նրանից, բայց կատարվում ե հակառակը—արեղանա-  
լածն ամբոխի կողմից, մանավանդ Քանաքեսի աշխա-  
տավորության կողմից, ընդունվում ե մեծ ցնծու-  
թյամբ.

«Եւ տգէտ ուամիկըն Քանաքեսոյ՝ յարժամ  
լուան զգալուստ նորա, զրոն տուեալ ելին ընդ

առաջ նորա՝ մինչև տնարգել աղջկունքն ևս գնա-  
յին ի տես կախարդին այսորիկ...»<sup>1</sup>:

Մեխլույին դիմավորող այս մասսան սոսկ հանգի-  
ստաես չեր, այլ նրա գործի համակրողն ու յերկըր-  
պագուն եր: Այս հանգամանքն ևս հաստատում ե, վոր  
Ամիրդունա խանի ժամանակ Հայաստանում առաջա-  
ցած աշխատավորական խավերի շարժումը մասսայա-  
կան բնույթի եր կրում:

Մեխլուն, խանի կողմից կրած պատիժներից հե-  
տո, Քանաքեռ հասնելուն պես, իր շուրջը համախրմբ-  
վում աշխատավորական մասսաներին կոչ և անում  
պայքարի դուրս գալ ջանազործող դասակարգի գեմ,  
իսկ Քանաքեռի յեկեղեցում քարոզելին՝ ապստամբու-  
թյան կոչ և անում և պահանջում և սպանել ուսագը-  
րուխ աբեղաներին.

«Եւ տոեալ զկախարգն բերին ի Քանաքեռ  
(խոռքը վերաբերում ե Մեխլույին, իսկ նրան  
Քանաքեռ տանողները հանդիսանում եյին աշ-  
խատավորները—Հ. Հ.), և տարան ի ներքի եկե-  
ղեցին: Եւ ի չբաւել տեղայն, ելեսլ նստաւ ի վե-  
րայ սեղանին. և զոտսն կախեալ ի վայր՝ և զո-  
ղանջէր դէպ յաբեղայսն՝ և ասէր, ով ոք՝ որ  
սպանանէ արեղայ մի, այլ ոչ զոյ հարցումն մե-  
զաց նորա, այլ երթայ յարքայութիւնն Աստու-  
ծոյ»<sup>2</sup>:

Այս քարոզներից աղդված՝ շատերը փորձ են տ-  
նում սպանել սեղալուխներին, հատկապես նրանց, փ-  
րանի հափետակել են զյուղացիների հօգերը, ալզիները և  
ոյլ ունեցիլածքը:

Մեխլույի այդ պրոպագանդայի առաջն առնելու

<sup>1</sup> Զամարիս—«Պատմագրութիւն», հատ. Ա., գլ. Իթ, էջ 51:

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 52:

և գյուղացիության ըմբոստացումներն ու ընդգվռումները կասեցնելու համար Քանաքեռ են զնում կաթողիկոսն ու խանի ֆառաշները, վորոնք ստիպում են գյուղացիներին ցրվելու, իսկ Մեխլույին՝ Յերևանյան յերկրից դուրս գնալու, սակայն ամբոխը, վոր հավաքած եր Քանաքեռում, ընդդիմանում ե, իսկ խանի ֆառաշները զենքի ուժով ցրում են գյուղացիներին, Մեխլույին ել քշում են Քանաքեռից գեղի Ապարանի գավառը. «...և հանեալ վարեցին զնա մինչև ի նիդ (Ապարան—Հ. Հ.) գաւառում»<sup>1</sup>:

Այսպիսով, Մեխլույի գլխավորած շարժումն իր բարձրագույն կետին և հասնում Յերևանի բերդում և Քանաքեռ գյուղում, յերբ յերկու հակամարտ դասակարգերը բախվում են իրար և այդ բախման ընթացքում շահագործվող դասակարգը պարտվում ե, իսկ շարժման ղեկավար Մեխլուն հալածվում ե խանի ֆառաշների կողմից, և շարժումը ճնշվում ե, Բայց հարցը միայն որանով չի սպառվում, գյուղացիական դադախարախոսը Քանաքեռից հալածվելուց հետո իր պայքարը շարունակում ե նաև Ապարանում, իսկ հետագայում՝ նաև ուրիշ շրջաններում: Նրա գեմ սկսված հալածանքը հավանաբար չի վերջանում միայն Քանաքեռում, այլ շարունակվում ե նաև Ապարանում, վորովհետեւ ըստ պատմիչների, սեազլուխներին հալածողը չի կարողանում յերկար մնալ նիդ գավառում, շուտով այնտեղից անցնում ե Երզրում և ապա շարունակում է գնալ գեղի Յերուսաղեմ<sup>2</sup>:

Սակայն գյուղացիական իդեոլոգի գեմ խանի և

չաթողիկոսի կողմից սկսված պայքարը չի վերջանում նրան Յերևանից և Նիդ գավառից քշելով միտին, նրա զեմ սկսված հալածանքը շարունակվում ե նաև Երզրումում և Երուսաղեմում, վորովհետեւ Եղմիածնից գրում են Երզրում Պողոս վարդապետին, Վարպետի նոր բանի և պատճի նրան:

«Եւ էր յԵրզրում կեղացի Պօղոս վարդապետն. և աստի գրեցին առ նա՝ վասն նորա չարութեան, և նա կալեալ զնա՝ էառ զվեղարն զփրլրնն, և պատուիրեաց ուկտաւորացն Երուսաղեմի ոչ ընդունել զնա ընդ ինքեանու»<sup>3</sup>:

Զաքարիան այսքանով ել վերջացնում ե իր պատմությունը Մեխլույի մասին: Այսպիսի վախճան և ունենում գյուղացիական շարժման ղեկավարի կյանքը: Յեթե արեղանալածը հալածվում ե նույնիսկ յերկրից դուրս, ապա վոչ մի տարակույս չի կարող լինել, վոր Մեխլույի գլխավորած շարժումը յեղել և աշխատավորական լայն մասսայական մի շարժում, ուղղված շահագործող գասակարդի յերկու թևերի դեմ, առանձ նապես հոգեորականության կուռակրոն խավի գեմ:

Եջմիածնի կաթողիկոսն Արարատյան աշխարհից պրում և Յերուսաղեմի պատրիարքին՝ Մեխլույին պատժելու: Այդ գրության հիման վրա Յերուսաղեմում նրան բոնում ու բանտարկում են, նա աղատվում է յովլվաթավորների միջամտությամբ:

«...եւ զնաց յԵրուսաղէմ: Եւ անդ շատոք գանկատէր էին Գրիգոր եպիսկոպոսին յԵրուսաղեմաց, և նա ի շղթայս էր եղեալ և ի բանտի արկեալ զի տացէ ի ձեռո Պարոնին: Նա ուխտա-

<sup>1</sup> Զաքարիա—«Պատմագրութիւն», հատ. Ա., զլ. իթ. եջ 53.

<sup>2</sup> Զաքարիա—«Պատմագրութիւն», հատ. Ա., զլ. իթ. եջ 53:

<sup>3</sup> Զաքարիա—«Պատմագրութիւն», հատ. Ա., զլ. իթ. եջ 53:

կան տողուաթաւորքն<sup>1</sup> բազում աղաչանօք հազիւց գերծուցեր էին ի ձեռանէ Գրիգոր Եպիսկոպոսին և եկեղել էր ի Հալապ: Եւ մեր երկրէն վաճառական Մաֆարն ասաց թէ՝ ի Հալապայ ես բերի մինչեւ ցԱմիդ և անտի ի յետ անյայտ եղի և ոչ գիտաց թե ուր գնաց»<sup>2</sup>:

Այսպես ահա, գյուղացիական շարժման դեկապարին Զաքարիա պատմիչը կորցնում է Յերուսաղեմի հանապարհին, իոկ Դարանազցին, նրան, Յերուսաղեմի բանտից ազատվելուց հետո, անհայտացնում է Ամիդ (Դիարբեքիր) քաղաքում: Մի խռոքով՝ նրա վտիւճանը պարուրված է միջության մեջ:

#### IV

Արդ, յեթե Մեխլույի գլխավորած շարժումը մասսայական բնույթ է կրեւ ապա այդ շարժմանը հասարակական վրո խավերն են մասնակցել: Այդ մասին հետաքրքրական տեղեկություններ հաղորդում են դարձյալ մատենափիրները: Զաքարիայի ասելով՝ Մեխլույի շարժմանը մասնակցել են «...եկեղել յարեցան ի նա...ոչ միայն գոհենիկ աշխարհականք և ուամիկը այլ և տգէտք երիցունք, և փարթամ և մեծազգի մարտիկը»<sup>3</sup>:

Այս հատվածում գործածված «գոենիկը աշխարհականք» և «ուամիկը» տերմինները վերաբերում են աշխատավորական մասսաներին: Հայտնի յե, վոր մել մատենագիրները, վորպես տիրապետող և շահագործող դասակարգի իրեղուուներ, ազնվականներին, «մեծազգի»

<sup>1</sup> Խոսքը վերաբերում և վաճառականներին. Հ. Հ.:

<sup>2</sup> Գարտեալցի—«Փամանակագրութիւն», եջ 472:

<sup>3</sup> Զաքարիա—«Պատմագրութիւն», գլ. Իթ., եջ 49:

և փարթամ» մարդկանց «գոենիկ» անվանել չեյին կարող: Ըստ նրանց՝ գուենիկ և կոչվել ազգաբնակության ստորին խավը: Նույնը պետք է ասել նաև «ուամիկ» տերմինի մասին:

Ամբողջ միջնադարում սովորաբար «ուամիկ» են կոչել յերկրի ազգաբնակության ստորին խավերին, վորոնք չեյին կարող մտնել աղնվականների և հոգկորականների արտոնյալ գասերի մեջ, այսպես կոչված «աղաղատ»-ների գասի մեջ: Արհամարհված սոցիալական միտերմին եր այդ, վոր ֆեոդալ դասակարգը տվել եր յերկրի ազգաբնակության ստորին շերտերին՝ «շինական»-ներին և քաղաքի բնակչությանը (տես պրոֆ. Հ. Մանուկյան, «Ձեռդալիզմը հին Հայաստանում», եջ 140, 153, Յերևան 1934 թ.): Այսուեղից ել յեզրակացնում ենք, վոր Մեխլույի շարժմանը հետևող ուամիկները վոչ այլ վոք եյին, յիթե վոչ իրենք՝ գյուղացիները:

«Տգէտ երիցունք» վորակումը վերաբերում է դյուղական քահանաներին ու քարոզիչներին, վորոնք կազմելով հոգերականության պլեբեյական մասը, իրենց տնտեսական դրությամբ հեռու չեյին կանգնած գյուղացիներից և իրենց պայքարի ընթացքում շատ անգամ հանդիս եյին գալիս նրանց հետ միասին՝ ընդգեմ շահագործող գասակարգի: Հետեւաբար, պատմիչի գործածած «տգէտ երիցունք» արտահայտությունը ցույց է տալիս, վոր շարժմանը մասնակցել են նաև գյուղական յերեցները: Իսկ ինչ վերաբերում է «փարթամ» և «մեծազգի մարդիկը» տերմիններին, ըստ յերեւացին մատենագիրներն ակնարկում են առևտրականներին:

«Փամանակագրության» հեղինակ Գրիգոր Դա-

բանապղին ընդարձակ եջեր ունի գրած հայ առևտրական կապիալի ներկայացուցիչների, համկապիս նոր Զուղայի առևտրականների մասին: Նա հայ գույներով և նկարագրում առևտրականների վարքն ու կենցաղը և միաժամանակ ավելացնում է, վրբ Մեխլույի ուսած շարժումն առանձնապես նրանց սրբառի եր և ամենից ավելի նրանք եյին խրախուսում և ընդառաջում նրա շարժմանն ու տարածում նրա համբավը:

«Եւ զային այս ջուղայեցիք և հիացուցանին զայս աշխարհի մարդիկ և սուս սքանչելիս պատմէին թէ՝ բազմութիւն մարտիոց ընդ իւր ըլջեցուցաներով, և որք հակառակին և ոչ լսին հրամանացն զմեազլուին ի ձեռն չտալով նմա, նա հրաման տուեալ մարտիոցն ուտել զամենայն վաստակ և զիստ երկրին և սպասել զամենայն պտուղ անդոյ նոցա...»<sup>1</sup>:

Այս մեջերումն ուշագրավ և նախ՝ այն տեսակետից, վրբ հաստատում է Մեխլույի շարժման մասսայական լինելը, յերկրորդ՝ վրբ աշխատավորական մասսաները կազմում եյին այդ շարժման զլիավարուժը, և յերրորդ՝ արեղանալած Մեխլույի համբավը ժողովրդի մեջ տարածողներ հանդիսանում եյին ջուղայեցի վաճառականները: Սա չի նշանակում, իհարկի, վրբ մարտնչող արեղանալածը հանդես է զալիս վորպես առևտրականների գաղափարախոս, սակայն «զուշվաթավորները» ծափահարում ու ընդառաջում եյին արեղանարի նկատմամբ ջարդ կազմակերպողին նրա համար, վորովհետև նա իր շարժումն ուղղել եր այդ ժամանակ հաստրակական կյանքի տերն ու անորենը

<sup>1</sup> Դարանալցի—«Ժամանակագրութիւն», եջ 470:

հանդիսացող սեավլուիս արեղանսերի դեմ, և միաժամանակ այդ շարժումը խորտակում եր միջնադարյան գեղագլաւան կարգերը, վարոնք խոչընդուն եյին հանգիստական հաստրակակարգի դարձացմանը:

Մեխլույի շարժման զյուղացիական լինելը վայելացնում է նաև Զաքարիայի հետեւյալ տեղիկությունը, «...եւ տղէտ սամիկքն Քանաքեսոց՝ յորժակ լուսն զգալուսն նորա (Մեխլույի-Հ, Հ.), զրոհ տուեալ ելին ընդ առաջ մինչև անտրդել աղջկունք և գնայինն...»<sup>2</sup>: Զաքարիայի տվյալները հաստատում են նաև Գրիգոր Դարանաղին:

«Եւ ահա այսպէս է տառուածային հրամանն, որ զայնպիսի մոլորհալսն սիրով ի սընզիք ելանել և զանել և ի վերայ ուսոց զնել և ի փարափա ածել և խառնել ի սուրբ հօտն և ուրախ լինել ի գիւտ մոլորհոյն...որպէս այս գիւտանակ Միլոյանանէր չարութիամբ: Զարկանցունց հեղմուն զրծէր և տեսանէր սր հաճոյ էր յաջու ամենեցունց տղէտ աշխարհականացն իւր անօրէն մոլի կատաղութիւնն...»<sup>2</sup>:

Ինչպիս յերեւում և, «տղէտ աշխարհականացն» հաճոյ եյին Մեխլույի զակափարները և այդ պատճառով իլ հետեւում եյին նրան:

Այսպիս, յեթե ամփոփիլու լինենք Մեխլույի գըլխավորած շարժման շարժիչ ուժերի խնդիրը, կզանք այս յեղակացության, վոր, առաջին՝ շարժման մասին ամփոփները հիմնականում հանդիսանում եյին զյունակցողները, հատկապես նրանց չքափոր մասը, յերկացիները, հատկապես նրանց չքափոր մասը,


<sup>1</sup> Զաքարիա—«Ժամանակագրութիւն», հատ. Ա., գլ. Իթ, եջ 51:

<sup>2</sup> Դարանաղի—«Ժամանակագրութիւն», եջ 471:

Երեղ՝ Հոգևորականների ստորին խավը՝ քահանաները  
և յերբորդ՝ այդ շարժմանը մասնակիորեն մասնակցել  
են նաև առետրականները։ Առետրականների մաս-  
նակցությունը համարում ենք մասնակի այն պատ-  
ճառով, վորովհետև նրանք շարժմանը մասնակցել են  
անուղղակի կերպով։ Ինարկե, Մեխլույի քարոզած գա-  
ղափարները չեյին կարող ընդունվել առետրականնե-  
րի կողմից, վորովհետև նա առետրականների գաղա-  
փարախուը չեր, բայց քանի վոր Մեխլույի գլխավո-  
րած շարժումն ուղղված եր Փեոդակիզմի դեմ, վորը  
կաշկանդում ու խոչընդու եր հանդիսանում առետրա-  
կան կապիտալի զարգացմանը, այդ չափով ել առե-  
տրականներն ընդառաջում եյին Մեխլույի գլխավո-  
րած շարժմանը և նույնիսկ նրա կյանքը փրկում եյին  
վտանգից։

Արդ՝ Բնէ դիրք եր բռնել Մեխլույի շարժման  
նկատմամբ քաղաքների արհեստավլորությունը—այս-  
պես կոչված քաղաքային դասի միջուկը։ Այդ հարցի  
պատասխանն առայժմ հնարավորություն չունենք  
տալու, նյութեր չինելու պատճառով, այն թողնում  
ենք հետագային։ Սակայն պետք են նշել, վոր XVII դա-  
րի առաջին քառորդում Հայաստանի հյուսիսային մա-  
սի միակ քաղաքը հանդիսանում եր Յերևանը, վորն  
իր տնտեսական կարողությամբ և բնակչության թվով  
չեր հասնում նախորդ շրջանի քաղաքների զարգաց-  
ման աստիճանին, իսկ դարասկզբի ծաղկած Զուղա-  
քաղաքն ամայացել եր Շահ-Աբբասի արշավանքների  
հետևանքով։ Բայց դրանից, Շահ-Աբբասը Մեխլույի  
շարժումից քիչ առաջ, յերկրի գրեթե ըոլոր արհես-  
տավորներին տարել եր գետի երան, մի հանգամանք,

վոր չի կարելի աչքաթող անել։ Հետևաբար, XVIII դա-  
րի սկզբին քաղաքները պետք ե զանվեյին զարգաց-  
ման ավելի ցածր աստիճանի վրա, և արհեստավորա-  
կան դասը ուետք ե թույլ լիներ, ուստի և չեր կա-  
րող մասնակցել հաստրակական կյանքում կատարվող  
յերեսոյթներին։ Ահա թե ինչն ե պատճառը, վոր մա-  
տենագրական աղբյուրները վոչ մի իսուք չեն ասում  
նրանց մասին։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b 2

Առաջարկն . . . . .	3
Крестьянские движения в Армении в первой четверти XVII века (Резюме) . . . . .	7

ԱՊԱԶԻՔՆ ԳԼՈՒԽԸ

Քաղաքական գրություններ Առաջավար Ասիայում և Հայաս- տանում XVI դարի վերջում և XVII դարի առաջին քառորդում . . . . .	11
--	----

ՅԵՐԱԲՈՐԻ ԳԼՈՒԽԸ

Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները XVI դարի յերկորորդ կեսում և XVII դարի առա- ջին քառորդում . . . . .	22
--	----

ՅԵՐՈՐՈՐԻ ԳԼՈՒԽԸ

XVII դարի առաջին քառորդի դյուզայիական շարժման նձիգադրյալները, ծրագիրը, ընթացքը, շարժիչնե- րը և ճետանդները . . . . .	39
---	----

Պատ. խմբագիր՝ Ա. Պողօսյան  
Տեխ. խմբագիր՝ Վ. Մանուկյան  
Սըբագրիչ՝ Ա. Նահվերդյան  
Կոնսուլ սըբագրիչ՝ Ա. Տօնյան

Հանձնված և արտադրության 3 մարտի 1939 թ.  
Ստորագրված և տպագրելու 26 մայիսի 1939 թ.  
Գլավլիտի լիազոր Ե-2293  
Պատվեր № 325, հքատ. № 26, տիրաժ 2000  
Թղթի չափոր 72×105<sup>1/32</sup>, 4<sup>1/2</sup> տպագրական մամուլ:

---

Կիբովականի տպարան

ՀՀ Ազգային գրադարան



NL0415872

